

ԱՅՍ ԹԻՈՎ ԿԱՐՂԱԼ՝

ԵՐԲ ՍԱՀՄԱՆ ԳԿԱՅ, ԳԿԱՅ ՆԱԳԷ ՀԵՏԵԱՆԵ	Էջ 2
ԿԱՆԿԱՏԵՍՈՒՄԵՐՈՒ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԸ...	Էջ 3
ՄԵԿ ԲԵՐԻՍՏՈՍ, ԲԱՅՅ ԲԱՏՆՈՒՄԸ ԵՎԵՂԵՅՆԵՐ...	Էջ 4
ՍՈՒՐԵ ԷԶՍԻՍՏԵՆԻ ՏՕՆԻՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ	Էջ 5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐՆ ԽՐԱՍՏՈՒԷ ԵՆ...	Էջ 5
ՈՒՍՏԱՆԻ ԵՎԵՂԵՅՆԵՐ՝ ԶԵՐ ԱՌՁԵԷ ԼՈՐ ՄԵՐՈՒԳԷ Է	Էջ 6
ՎԱՀՍԵ ԹԵՂԵՆԵՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՄԻՋՈՒՄՈՒՄՆԵՐԸ	Էջ 7
ՊԵՆՏԵՆՆԵՆԻ ՅՈՒՆԿԱՐԿՈՒԹԻՒՆԸ	Էջ 9
ՊԵՆՏԵՆՆԵՆԻ ՄԵԶ ՀԱՅԱԿԱՆ ՄԱՐԿԸ	Էջ 11

ԺՈՋԷՖ ԱՌԵՆ

«ԲԱՆԱԿՅԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ ՏՈՒԻ ԵՒ ԱՆՈՐ ԻՐԱԿՈՐԾՈՒՄԸ ՄԻՆՁԵՒ ՎԵՐՋ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՄ»

Լիբանանի Հանրապետության նախագահ ժողովրդի Աուն ընդունեց Քեարր-իան գաղափարի քաղաքապետություններու պատուիրակությունը եւ անոր անդամներուն յայտնեց. «Ուաշինգթոնի մէջ բանակցութիւններու նպատակը պետութեան գոյութեան վերականգնումն է, որպէսզի լիբանանցիները ոչ որի հետեւորդ ըլլան, ըլլայ այդ հոգատար իշխանութեան կամ ոեւէ մէկը մեր կողմէ լիազօրելու ճանքով:



«Որոշումին տէրը մենք ենք, եւ Լիբանան գերիշխան պետութիւն է, երկիր մը, որ ունի իր գոյացութիւնն ու կարողութիւնը: Անոր ժողովուրդը, որ միշտ ալ շարք մը երկիրներու զարթօնքին մէջ իր ներդրումը ունեցած է, այսօր կրնայ նպաստել իր երկրի վերահիմնութեան եւ զարթօնքին»:

«Արգիլուած է վերադառնալ հոգատարութիւններու ժամանակաշրջանին, ինչ որ ալ ըլլան անոնք: Մենք կ'ողջունենք որեւէ պետութեան օգնութիւնը, սակայն օգնութեան եւ ի նպաստ որեւէ պետութեան ու ի վնաս լիբանանեան շահերուն լիբանանեան ներքին հարցերուն միջամտութեան միջոց տարբերութիւնը մեծ է: Ատիկա չենք ընդունիր», ըսաւ ան:

«Կան Ծոցի պետութիւններէն մինչեւ եւրոպական ու այլ պետութիւններ, որոնց օգնութիւնները կ'ողջունենք, սակայն մեր պայմանը այդ պետութիւններու սեփական շահերու իրագործման համար մեր ներքին հարցերուն չմիջամտելն է», յայտնեց նախագահը:

«Բանակցելու որոշում տուի եւ այդ որոշումին իրագործումը մինչեւ վերջ պիտի շարունակենք, որովհետեւ Լիբանանը ՄԱԿ-ի հիմնադիր անդամ է, եւ իր գոյացութիւնն ու գերիշխանութիւնը ունի, ինչպէս նաեւ մեկնելով այն համոզումէս, թէ պատերազմները չեն տար որեւէ արդիւնք, բացի կորուստներէն, որոնք բոլորը կը բաժնեկցին», նշեց Աուն:

ԻՐԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐԸ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՆ ԱՆ ՍՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԻՐԱՔԱՆՉԻՐ ՄՐՑՈՒՄԵՆ ՄԻԱՅՆ ՄԵԿ ՕՐ ԱՌԱՋ

Ֆուտպոլի 2026-ի Համաշխարհային բաժակի մրցումները սկիզբ առին, Յունիս 11-ին, Մեքսիքայի նշանաւոր «Azteca» մարզադաշտին մէջ, Մեքսիքա-Հարաւային Ափրիկէ հանդիպումով: Միացեալ Նահանգներու, Մեքսիքայի եւ Գանատայի համատեղ հիւրընկալութեամբ կազմակերպուած մրցաշարքին աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Յունիս 19-ին, Նիւ Եորքի «MetLife Stadium»-ին մէջ:

Այս մրցաշարքը արդէն իսկ կոչուած է պատմական դառնալու. արդարեւ, ֆուտպոլի տարեգրութեան մէջ առաջին անգամ ըլլալով՝ հիւրընկալող երկիրը պիտի ընդունի իրեն հետ պատերազմական իրավիճակի կամ խիստ լարուած յարաբերութիւններու մէջ գտնուող երկրի մը ազգային հաւաքականը:

Այս բացառիկ ենթախորքին՝ Իրանի ֆուտպոլի դաշնակցութեան նախագահ Մեհաբի Թաժ յայտարարած է, որ իրենց երկրի ազգային ընտրանիին արտօնուած է Միացեալ Նահանգներ մուտք գործել Համաշխարհային բաժակի շրջանակէն ներս տեղի ունենալիք իրաքանչիւր մրցումէ միայն մէկ օր առաջ:

Թէեւ Իրանի հաւաքականին հիմնական կեցակայքը պիտի ըլլայ Մեքսիքայի մէջ, սակայն իրանցի ֆուտպոլիստները խմբային փուլի գտնման երեք մրցումներն ալ պիտի խաղան ԱՄՆ-ի տարածքին: Ըստ նախատեսուած ժամանակացոյցին՝ Յունիս 15-ին, Լոս Անճըլըսի մէջ անոնք պիտի մրցին Նոր Զելանտայի, Յունիս 21-ին՝ դարձեալ նոյն քաղաքին մէջ Պելճիքայի, իսկ Յունիս 26-ին Սիէրըլի մէջ՝ Եգիպտոսի հաւաքականին դէմ:

Նախապէս, Մեքսիքայի մէջ Իրանի դեսպան Ապուլֆազլ Փասանտիտէն յայտնած էր, որ հաւաքականի մարզիկներն ու թեքնիք անձնակազմը պարտաւոր են Միացեալ Նահանգներ ժամանելու միայն խաղերու օրը եւ նոյն օրուան ընթացքին ալ վերադառնալու Մեքսիքայի իրենց կեցակայքը: Սակայն Իրանի ֆուտպոլի դաշնակցութեան նախագահը, իրանեան կիսապաշտօնական ISNA լրատու գործակալութեան հետ գրոյցի ընթացքին, հերքած է այս տեղեկութիւնը՝ յստակացնելով. «Արտօնեցին, որ մեր ազգային խումբը մրցումէն մէկ օր առաջ մուտք գործէ երկիրը»: Միացեալ Նահանգներու Արտաքին գործոց նախարարութեան համաձայն՝ ֆուտպոլի այս հեղինակատր մրցաշարքին մասնակցելու համար իրանցի մարզիկներուն եւ անձնակազմին մուտքի արտօնագրերը արդէն իսկ պատրաստ են ու տրամադրուած: Թէեւ պաշտօնական աղբիւրները չեն յստակացներ, թէ խաղի աւարտէն ետք իրանցիները որքա՞ն ժամանակի ընթացքին պէտք է լքեն ԱՄՆ-ի տարածքը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՄԻՆՁԵՒ ՅՈՒՆԻՍԻ 9-Ը ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՏՈՒԵԱՆԵՐԸ՝ ՌԱԿ-ԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՄՈՒԼԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Բացառապէս ձգտուած մրցութրոսի մը մէջ՝ Հայաստանի Ազգային ժողովի համապետական ընտրութիւնները տեղի ունեցան կիրակի Յունիսի 7-ին:

Ընտրութեանց վերջնական արդիւնքները տակաւին յայտնի չեն: Անոնք ենթակայ են տարբեր ընտրական կանոններու խախտման հետեւանքով կատարուող վերաքննութեանց:

Հետեւաբար մեր այս յայտարարութեամբ, կ'ուզենք արժանայ եւ սակայն բաւականին որոշ արդիւնքներով, նշել հետեւեալը. քուէներու առաւելութեան շարքով խորհրդարան պիտի անցնին «Քաղաքացիական պայմանագիր», «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինք, «Բարգաւաճ Հայաստան» եւ հաւանաբար նաեւ «Միասնութեան թեւեր» խմբաւորումները:

Մինչ որոշ է, թէ Նիքոլ Փաշինեանի գլխաւորած ԲԳ-ն պիտի կարենայ կազմել կառավարութիւնը, սակայն սահմանադրական փոփոխութիւններ կատարելու իր կարողութիւնը հաւանաբար պիտի ըլլայ խիստ սահմանափակ, երբ յայտնուին վերջնական արդիւնքները:

Ընտրական կանոններու խախտման մասին վեճերը հաւանաբար տակաւին երկար ժամանակ մնան անլոյծ:

Այս հանգրուանին սակայն, հակառակ շրջանաւարտ իշխանութեանց կողմէ իրենց վարչական միջոցներով ընտրական ընդունումը սովորութիւններու եւ կանոններու խախտման ակնյայտ պարագաներուն, որոնք այժմ տակաւին ենթակայ են ընթացիկ վերաքննութեանց, ամենայն դէպս, որպէս առաւելագոյն քուէ ստացող խմբաւորում՝ կը շնորհաւորենք «Քաղաքացիական պայմանագիրը»:

Մեր գլխաւոր կոչը եւ պատգամը սակայն, հաստատ կը մնայ՝ ուղղուած Հայաստանի մէջ գործող բոլոր քաղաքական, տնտեսական եւ մտաւորական շրջանակներուն, ինչպէս նաեւ ամբողջ Հայ ժողովուրդին, ամէն ջանք գործադրել, որպէսզի Հայաստանի մէջ տիրէ խաղաղութիւն, միասնականութիւն, եւ յարգանք հանդէպ մեր բոլոր սրբութիւններուն: Մանաւանդ առաւելագոյն կարեւորութեամբ ու հետեւողականութեամբ հետապնդել երկիրը իր սեփական պաշտպանութեան միջոցներով օժտելու կենսական աշխատանքը:

ՌԱԿ ՀԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՄՈՒԼ

ՌԻՏԱԿԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ՝ ԴԵՊԻ ԱՐՄԱՇ

Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Ս. Սահակ Սրբազան արքեպիսկոպոս Մաշալեան գլխաւորեց Սուրբ Խաչ դպրեվանքի ընտանիքին կողմէ դէպի Արմաշ կազմակերպուած ուխտագնացութիւնը: Սուրբ Խաչ



դպրեվանքի եւ Սկիւտարի ընտանիքի համատեղ ջանքերով կազմակերպուած այս ուխտագնացութիւնը բացառիկ հոգեւոր ապրումներու առիթ դարձաւ՝ մանաւանդ, որ Արմաշի մէջ գործած պատմական վանքը հանդիսացած էր Սուրբ Խաչ դպրեվանքի ստեղծման ներշնչանքի աղբիւրը: Ուխտագնացութեան բոլոր մասնակիցները ունեցան վառ տպաւորութիւններ:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը ուխտագնացութեան շրջանակներէն ներս քաղաքավարական այցելութիւն մըն ալ տուաւ Քոնճալի կուսակալ Իլիամի Աքքաշին:

Նորին Ամենապատուութեան հետ էին Ս. Յարութիւն վարդապետ Տամատեան, Պատրիարքական փոխանորդ Ս. Գրիգոր աւագ քահանայ Տամատեան եւ այլ աշխարհական վարիչներ:

ԵՐԲ ՍԱՆՏՄԱՆ ԶԿԱՅ, ԶԿԱՅ ԵՆԵՒ ՆԵՏԵՒԱՆՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Ազգերը չեն անհետանում միայն պարտությունը, նրանք անհետանում են այն պահին, երբ համաձայնում են մոռանալ:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՊԳՂ, փրոֆեսոր

Կենսաբան դասաճանապարհից յետոյ սկսում է այն պահին, երբ կինը ամեն ինչ գիտի, բայց մնում է նույն պատմության մեջ: Գիտի՝ ով է սիրուհին, գիտի՝ ինչ յարաբերություն է, գիտի՝ ինչպես է կրկնում նույն խաբկանքը, բայց շարունակում է ապրել այնպես, կարծես դա դեռ «ընտանիք» է: Գրեթե նույն է ժողովուրդների ու պետությունների դեպքում: Սկզբում իրենք իրենց խաբում են՝ «երեխաների համար են անում», «չեն ուզում քանդել», «սեր կայ հայրենիքի նկատմամբ» եւ այլն: Բայց ժամանակի հետ պարզում է՝ նա ոչ թե ընտանիքն է պահում, այլ ինքն իրեն է կորցնում, քանզի ներսում, երբ սահման չունի, դառնում է ինքնամոռացություն: Եւ այդ ինքնամոռացության մեջ մարդ-անհատն սկսում է նորից ու նորից ապրել նույն ցավը՝ յիշելով ամեն ինչ, բայց ոչինչ չփոխելով:

Նա յիշում է դասաճանապարհը, յիշում է ամեն մանրուք, բայց շարունակում է մնալ նույն տեղում՝ կարծես ցավը դարձել է սովորական վիճակ: Իսկ երբ ցավը սովորական է դառնում, սկսում է մաշուել ինքնաշարժանքը: Անհատն այլևս չի հարցնում՝ «ինչու ինձ հետ այսպես վարվեցին», նա սկսում է համոզել իրեն՝ «սա սեր է»: Բայց սերը երբեք չի պահանջում ինքնակորուստ: Սերը չի պահանջում լուրջին այնտեղ, որտեղ ցավ կայ: Սերը չի ապրում նուաստացման հաշտին: Եւ երբ անհատը կորցնում է ինքնասիրությունը, բայց շարունակում է ասել՝ «սիրում եմ», դա արդեն սեր չէ: Դա կախումաժողովն է, վախ է, ինքն իրենից ու արժանապատուությանից հրաժարում է: Այդ անհատը չի կարող պահել իր արժանապատուությանը, որովհետեւ նա արդեն հրաժարվել է իրենից: Իսկ այն մարդը, ով հրաժարում է իրենից, ժամանակի ընթացքում չի կարող նաեւ ուրիշների աչքում մնալ որպես յարգանքի արժանի մարդ:


Նա գիտի ամեն ինչ, բայց ոչինչ չի անում: Եւ այդ չանելը դառնում է ամենամեծ սխալը, որովհետեւ իրաքանչիւր լռած օր նորից ամրացնում է այն, ինչ իրեն կոտորում է: Իսկ երբ սահման չկայ, չկայ նաեւ հետեւանք: Երբ հետեւանք չկայ, սկսում է անտարբերություն: Իսկ անտարբերության մեջ արդեն յարգանք չի մնում: Ու հենց այդտեղից սկսում է ամենադաժան ընկալումը՝ որ նրա ցավը այլևս լուրջ չէ, որ նրա լուրջինը թոյլտուրի է դարձել: Եւ անհատն այդ ընթացքում դանդաղ կորցնում է ամենակարեւորը՝ իրեն: Ոչ միայն զամից, այլ ամեն օր մի փոքր՝ յարմարելով, արդարացնելով, լռելով: Մնում է միայն մեկ հարց, որն այլևս ոչ ոք բարձրաձայն չի ասում, բայց բոլորը հասկանում են. այդ ամենը դեռ սե՛ր է հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ, թե պարզապես ինքնահրաժարում՝ ապրելու մի կեանքում, որտեղ ինքը վաղուց դադարել է իրեն պաշտպանել:

Իսկ կեանքը՝ միակն է, անկրկնելի ու անփոխարինելի: Ոչ մի գործ, զբաղմունք, մարդ ու մեր սեփական ուռճացումը զգացումը չարժեն մի թիզ անգամ, որ մենք չնկատենք ու չվայելենք մեր այսօրը, արելի ժպիտն ու երկնքի աստղերի մեղմ փայլը, սարերի հայարտ կեցումներն ու անտառների մեղմ շշմոջը: Մեր սիրելի մարդկանց համար չի մնում ժամանակ ու էներգիա, կարօտը սրտում ու ժառանգում պառկում ենք քնելու: Կորցնում ու մոռանում ենք կեանքի գոյներն ու շունչը եւ յանուն ինչի՞: Իրականում յանուն ունայնության ու անվերջանալի գործերի: Այդպես կորցնում ենք նաեւ ինքներս մեզ ու մի օր յանկարծ արթնանում հիանդ, անկողնում պառկած ու մի պահ գիտակցում իրականությունը: Բայց ապաքինությունց յետոյ կրկին մոռանում ու վազում, շտապում, գոյատևում: Փոխել ու փոխուել է պետք, քանի դեռ ժամանակ կայ ապրելու՝ մի վայրում տարիներ, միսում՝ ամիսներ, երրորդում՝ մի քանի ժամ: Ո՞վ գիտի: Աստուծոյ ձեռքում ենք: Ապրենք ու վայելենք, քանի շնչում ենք: Իսկ եթե չի ստացում, ուրեմն պետք է վերանայենք շատ բան մեր կեանքում ու առօրեայում:

Վերջին 40-50 տարում արեւմտեան քաղաքակրթությունն անսպասելիորեն բախուեց բազմազան հոգեկան խանգարումների ու հիւանդությունների բուռն զարգացող համակարգին: Հիւանդությունների ընդհանուր բեռի գրեթե 20 տոկոսը բաժին է ընկնում հոգեկան խանգարումներին եւ ինքնասպանությունների բարձր ցուցանիշներ ունեն գերզարգացած 10 երկրները: Մակայն, եթե խօսենք ժամանակակից զարգացած քաղաքակրթության հոգեկան ախտորոշման մասին, ապա իր հետեւանքներով ամենավտանգաւորը մի շարք հոգեկան հիւանդությունների արդիւնք սեռական անկարողությունն է (իմպոտենցիա): Եւ այդ թիւը մշտապես աճում է՝ որոշ դեպքերում հասնելով տղամարդկանց ընդհանուր թուի 80 տոկոսին: Այլ կերպ ասած՝ արդեն 30-40 տարի յետոյ գերզարգացած երկրներում տղամարդն ընդհանրապես կարող է գրկուել սերնդատուությանից: Աւելացնենք, որ դրան նպաստում են նաեւ սեռական սանձարձակության աճը, փոռնոկրաֆիան, ժամանակակից կնոջ արտաքին տեսքը, նաեւ՝ ժամանակակից նորաձեւությունը, որն անելի շուտ ոչ թե հագցնում է կնոջը, այլ առաջարկում է նրա մերկացման տարբեր ձեւեր՝ լրիւ, մասնակի եւ այլն: Իսկ այս ամենը տարածում է ամենուրեք, նաեւ՝ մեզանում եւ իր ամենաբացասական հետեւանքներն է ունենում կեանքի բոլոր բնագաւառներում, այդ թում Հայրենիքի ու սեփական ժողովրդի նկատմամբ վերաբերմունքը դրսևորելիս: Արդիւնքում, հասարակության բնական առաջնորդ տղամարդը դադարում է նորմալ լինելուց: Պատկերաւոր ասած դա հետեւելու տեսքն ունի. ա) ամենուրեք գերակշռող գործնական, ազրեսիւ եւ չափից արելի հաշուենկատ կնոջ կերպարն է՝ ընդունակ վերջնականապես ահաբեկել զարգացող անլիարժեքութամբ տղամարդուն: Նման կնոջ համար առաջին տեղում կարիերան է եւ որպէսզի կարիերա անեն, կանայք զանգուածաբար հրաժարվում են երեխայ ծնելուց, օրինակ, բարձրագոյն կրթութամբ գերմանուհիների 40 տոկոսը ներկայումս անգաւակ է: ք) միջին սեռի էակի կերպարը. կին, որը գիտակցաբար դադարում է կին լինելուց: Այդ ամենը յանգեցնում է. ինքնասպանական սինդրոմի շեշտակի զարգացմանը ուղիղ եւ փոխակերպուած տարբերակներով.

տնտեսական գործօն: Սպառողական տնտեսութան յարաճումն հաստատուծը կին-սպառողի համար նախատեսուած ապրանքների արտադրութիւնն է: Յատկապես կանայք են կատարում աշխարհում բոլոր գնումների առաւել քան 75 տոկոսը:

«Երկնագոյն» գործօն: Որոշ իմաստով, քաղաքակրթութան զարգացմանը զուգընթաց «ձեւաւորում է երկնագոյն քաղաքակրթութիւն»: Օրինակ, այժմ Մեծն Բրիտանիայի իւրաքանչիւր 20-րդ բնակիչը միասեռական է: Մակայն դրանց ազդեցութիւնն անհամեմատ մեծ է, քանի որ «Երկնագոյնները» եւ «Վարդագոյնները» պատկանում են հասարակութան վերին շերտերին: Աւելին, «Երկնագոյն» լինելը դառնում է ոչ միայն մոդայիկ, այլեւ կարիերայի համար կենսականօրէն անհրաժեշտ: Նշանաւոր քաղաքական գործիչներ,



երգիչ-երգահաններ, նկարիչներ, դիզայներներ, մոդելագործներ եւ այլն, հպարտանում են իրենց ոչ նորմալ կողմնորոշումով: Հեռուստատեսութիւնը եւ կինօն, փաստօրէն, զարթել են «Երկնագոյն կլանները»: Աւելի է «Երկնագոյն» դառնում քրիստոնէութիւնը: Հիմնականում հենց այս պատճառով է ողջ աշխարհում դիտուում իսլամի ընդունման աճ, որը տալիս է արժեքների կոշտ համակարգ եւ ակտիւ սոցիալական ծրագիր՝ չմերժելով միաստուածութիւն հիմնարար դոգմաները: «Երկնագոյնները» լաւ կազմակերպուած են, համակարգուած եւ, բնականաբար, ձգտում են իշխանութեան:

Իսկ ինչու հենց այսօր շօշափեցիւնք այս արգահատելի թեման: Որովհետեւ մեր երկիրն ու ժողովուրդն ամբողջովին ներառնուած են խորհրդարանական ընտրութիւնների գործընթացում: Ընտրութիւններ, որտեղ յստակ դրուած են լինելիութեան եւ գոյաբանական, պետականութեան պահպանման եւ ընդհանրապես ժողովրդի հայեցի ու արժանապատիւ դիմագիծը պաշտպանելու հարցերը: Որովհետեւ մերօրեայ երիտասարդութիւնը յաճախ տուրք է տալիս դարեր շարունակ մեր տունը քանդող օտարամտութեանը, որը կարող է ամենացաւալին ու վտանգաւոր հետեւանքներ ունենալ:

Յետոյ էլ այս համատեքստում հարց է առաջանում. կարո՞ղ է մեկ մարդը փոխել ամբողջ համակարգը: Սովորաբար քաղաքական իրականութեան մեջ այս հարցը հնչում է հեզմանքով, որովհետեւ համակարգը միայն մեկ անձ չէ: Այն ինստիտուտների, շահերի, կապերի ձեւաւորուած մեխանիզմների ամբողջութիւնն է: Բայց կայ մեկ այլ կարեւոր կողմ. Յանկացած համակարգի ներսում փոփոխութիւնը սկսում քաղաքական կամքից: Ո՞չ թե զանգուածային յայտարարութիւններից, այլ կոնկրետ պատասխանատուութիւն վերցնող անձից: Իսկ պատմութիւնը ցոյց է տալիս՝ համակարգերը չեն փլուզում միանգամից, այլ սկսում են փոխուել այն պահին, երբ ներսում յայտնում է անհատ, ով պատրաստ է վերանայել կանոնները: Շատ կարեւոր է, թե արդե՞օք համակարգը թոյլ կը տայ, որ այդ փոփոխութիւնը տեղի ունենայ, արդե՞օք քաղաքական համակարգը պատրաստ է ընդունել նոր անհատներ, թե շարունակում է վերարտադրել նույն շրջանակը, պարզ կը դառանայ ամենամօտ ապագայում:

Այս եւ մի քանի այլ հիմնահարցեր կը քննարկենք յաջորդիւ...

6.06.2026, Երեւան

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշակիր Կեօնեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Սիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ Անտիբեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուս)
Զաւէն Գրիգորեան	(Լթէսթ)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A.	
Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com	
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ԿԱՆԽԱՏԵՍՈՒԹՄՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՈՉ ԹԷ ԳԻՏԵԼԻՔ՝ ԱՅԼ ԻՆՏԵԼՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Ապագան գուշակելը երբեք չէ եղած պարզ գիտություն կամ անմեղ մարգարեություն. այն միշտ ալ եղած է քաղաքականության եւ ուժի դրսեւորման կարեւորագոյն ասպարէզ մը: Երբ վերջին ամիսներուն քաղաքագէտները կը փորձէին կանխատեսել Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքները, անոնց նպատակը ոչ թէ սոսկ իրականութիւնը նկարագրելն էր, այլ ընտրողներու վարքագիծը կանխորոշելն ու որոշակի ուղղութեամբ առաջնորդելը: Նոյնն է պարագան Տոնալտ Թրամփի՝ Իրանի վրայ հաւանական յարձակման վերաբերեալ տարածուած կանխատեսումները: Այդ գուշակութիւնները յաճախ ոչ թէ ռազմական ստոյգ տուեալներու վրայ հիմնուած էին, այլ կը նպատակադրէին ստեղծել վախի մթնոլորտ, որով հնարատր կը դառնար շուկաներն ու քաղաքական դիրքորոշումները ձեռնածու-



թեան (manipulation) ենթարկել: Այս տարուան Փետրուարին, վեց անանուն հաշիւներ 1.2 միլիոն տոլար շահեցան «կանխատեսման շուկաներուն» մէջ՝ գրաւ դնելով Իրանի դէմ յարձակման վրայ: Այս քսակները ֆինանսատրուած էին յարձակումէն ընդամենը քանի մը ժամ առաջ: Վերջերս ձեռքարկուեցաւ ամերիկացի ծովային մը, որ նախքան Վենեզուելայի նախագահ Մատուրոն առեւանգելու գործողութեան մեկնիլը, 40 հազար տոլար գրաւ դրաւ այդ գործողութեան իրականացման հաւանականութեան ի նպաստ եւ շահեցաւ 400 հազար ամերիկեան տոլար: Այս օրինակները անշուշտ անեկղոտի աստիճանի դէպքեր են համեմատաբար կանխատեսումներու համաշխարհային տնտեսութեան, որ կը գործէ ի շահ դրամի եւ ուժի մենատէրերուն: Սակայն մենք դարձեալ պէտք է հարց տանք. մնան բաներ գիտելի՞ք են, թէ՞ insider-ական տեղեկութեամբ համեմատած իշխանութեան խաղեր: Երբ գուշակութիւնը կը դառնայ դրամական շահոյքի եւ քաղաքական սաղորման գործիք, ապագան կը դադրի հաւանականութիւն ըլլալէ. այն կը դառնայ սպրանք, գոր կրնաս գնել եւ վաճառել:

Արդիականութիւնը յաճախ կը փորձէ ստրկացնել մարդկային գիտակցութիւնը՝ ապագան ներկայացնելով իբրեւ կանխորոշուած եւ անխուսափելի իրողութիւն: Երբ գիտութիւնը կամ արհեստական բանականութիւնը կը ստանձնեն ապագայի կանխատեսման դերը, անոնք հանդէս կու գան իբրեւ նորօրայ արքունի աստղագուշակներ: Այս ամէնը ինձի կը յիշեցնէ Լուի ԺԱ. Թագաւորի ծանօթ պատմութիւնը: Պալատական աստղագուշակը կանխատեսած էր Թագաւորի սիրուհիին մահը շաբաթ մը առաջ: Երբ կինը մեռաւ, Թագաւորը սարսափեցաւ եւ որոշեց սպաննել գուշակը՝ մտածելով, որ ան կամ մարդասպան է, կամ ալ չափազանց վտանգաւոր ուժի տէր կախարդ մը: Ծառաներուն հրամայեց, որ իր նշանով գուշակը պատուհանէն վար նետեն: Բայց երբ Լուիս հարցուց. «Այդքան խելացի ես, ըսէ նայինք, դուն ե՞րբ պիտի մեռնիս», աստղագուշակը, առանց շփոթելու, պատասխանեց. «Ձերո՞ Մեծութենէն երեք օր առաջ»: Թագաւորը, բնականաբար, երբեք չտուաւ պատուհանէն նետելու նշանը: Այս պատմութեան մէջ աստղագուշակը ոչ թէ աստղերուն մէջ տեսաւ ճշմարտութիւնը, այլ հասկցաւ իշխանութեան հոգեբանութիւնը: Ան իր կանխատեսումը օգտագործեց որպէս կեանքի ապահովագրութիւն:

Այսօր մեր «աստղագուշակները» Սիլիքոնեան Հովիտի տնօրէններն են, իսկ մեր նոր մոզը՝ Արհեստական բանականութիւնը (AI): Մեզի կը քսեն, թէ մեքենաները կրնան գուշակել մեր վարքագիծը, մեր առողջութիւնը, մեր ապագայ յանցագործութիւնները: Բայց կայ հիմնական տարբերութիւն մը իրերու եւ մարդոց միջեւ: Եթէ կանխատեսես, որ վաղը անձրեւ պիտի գայ, ամպերը չեն տպաւորուիր քու խօսքերդ եւ իրենց ընթացքը չեն փոխեր: Օղերետութեամբ կանխատեսումը չի փոխեր օդը: Բայց մարդկային կանխատեսումները ունին մագնիսական ուժ: Անոնք իրենց կողմ կը քաշեն իրականութիւնը: Անոնք ոչ թէ փաստեր են, այլ այն, ինչ փիլիսոփաները կը կոչեն «խօսքային արարքներ» (speech acts)՝ քաջութեամբ հրամաններ:

Երբ թեքնոլոգիի հսկաները կը յայտարարեն, թէ «ապագային բոլոր պիտի օգտագործենք այսինչ ծրագիրը, ատիկան անխուսափելի է», անոնք չեն գուշակել, այլ մեզի կը հրամայեն գնել այդ արտադրանքը, որպէսզի իրենց գրպանները լեցուին: Իսկ մենք, վախճալով ետ մնալէ, կը վազենք ու կը գնենք՝ կատարելով անոնց մարգարեութիւնը: Ասիկա գիտութիւն չէ, ատիկա հնազանդութիւն է: «Անխուսափելի» բառը միշտ ալ եղած է բռնապետներու եւ շահագործողներու ամենասիրած բառը. այն կը փակէ ամէն տեսակ երկխօսութիւն:

Աելին, այս թուային գուշակութիւնները կը ստեղծեն քաֆքայական աշխարհ մը, ուր արդարութիւնը կը մեռնի: Եթէ դրամատունը մերժէ քու վարկի դիմումդ, որովհետեւ յստակ պահանջ մը չես լրացուցած, դուն կրնաս բողոքարկել, որովհետեւ ատիկա անցեալի փաստ է: Բայց եթէ մեքենան մերժէ քեզ՝ հիմնուելով այն «կանխատեսման» վրայ, որ դուն ապագային կրնաս սնանկանալ, դուն ինչպէ՞ս կրնաս հերքել ապագան: Ապագան փաստ չէ, այն անստուգելի է: Այսպիսով, կանխատեսումը կը դառնայ կատարեալ ծածկոյթ՝ անարդարութիւնը քաջցնելու համար:

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՇԵԱՆ

Լարի Էլիսըն, որ չէ վարանած նոյնիսկ իր ղեկավարած ընկերութիւնը կոչել Oracle (բախտագուշակը՝ հին յոյներուն մէջ), կը կանխատեսէ յառաջացումը հսկողութեան պետութեան մը, ուր քաղաքացիները միշտ լաւ պիտի վարուին, որովհետեւ գիտեն, որ իրենց ամէն քայլը կը դիտուի: Առանց յանգանքի աշխարհի այս պատրանքը իրականութեան մէջ կը բերէ ամենամեծ յանցանքը՝ բացարձակ հեղինակատիրութիւնը:

Այս ամէնը այսօր կը հասնի իր գագաթնակէտին, երբ ինքնիրականացող մարգարեութիւնները Արհեստական բանականութեան միջոցով կը ստանան գերբնական հզօրութիւն: Այդ պատճառով է, որ հիմա աւելի քան երբեք հրատապ է խորհիլ կանխատեսումներու էութեան մասին: Այնպիսի պարագաներու մէջ, ուր արդարութիւնը կենսական է, մենք պէտք է նախընտրենք քափանցիկ ու բողոքարկելի չափանիշներ, այլ ոչ թէ կանխատեսողական վիճակագրական մոլուշներու համադրումներ:

Ամփոփելով այս միտքերը՝ տեսնենք, թէ ուր կը հասնինք: Առաջին կանխատեսումները երբեք փաստեր չեն, այլ խօսքային արարքներ. անոնք ոչ թէ գիտելիքի, այլ իշխանութեան գործիքներ են: Երկրորդ՝ անոնք դուր կը բանան ձեռնածութիւններու (manipulation-ներու) առջեւ:

Երրորդ՝ անոնք կը ստեղծեն ու կը քողարկեն անարդարութիւնը: Այսօրու գիտատր պատգամը այն է, որ կանխատեսումները իշխանութեան զէնքեր են, բայց անոնք կը գործեն միայն այն ատեն, երբ մենք կը հաւատանք անոնց:

Եթէ Սոֆոկլէսի նշանատր հերոսը՝ Էտիփը ծիծաղելով անցնէր այն մարգարեութեան վրայ, թէ ինք պիտի սպաննէ հայրը եւ ամուսնանայ մօր հետ, փոխանակ սարսափահար ըլլալու, ան երբեք չէր հեռանար իր տունէն եւ չէր երթար Թեպէ, ուր հանդիպեցաւ իր ճակատագիրին: Անոր վախը եղաւ այն շարժիչ ուժը, որ իրականացուց գուշակութիւնը: Մենք կը դիմենք մարգարեներուն, որովհետեւ կը վախճանք անորոշութենէն: Բայց անորոշութիւնը իրականութեան մէջ բարի լուր է: Անիկա կը նշանակէ, որ ապագան դեռ գրուած չէ, այլ մերն է՝ զայն գրելու համար: Մենք կրնանք դիմագրաւել այդ դատարկ էջը ստեղծագործութեամբ, հետաքրքրութեամբ եւ արկածախնդրութեան հաճոյքով:

Ապագան կանխատեսելու ջանքերը միշտ ալ ձեռք-ձեռքի կը քալեն զայն վերահսկելու ջանքերուն հետ: Ուստի, զգուշացէ՛ք մարգարեներէն եւ մարգարեութիւններէն: Միայն այն ատեն, երբ կ'ընդունինք, որ չենք գիտեր, թէ ապագան ինչ կը պահէ մեր ընթացքին համար, եւ կը գործենք ըստ այդմ, մենք կրնանք վստահ ըլլալ, որ կ'ապրինք ազատ ընկերութեան մէջ: Մի՛ խոնարհիք մարդոց կանխատեսումներուն առջեւ, գիտցէ՛ք, որ անոնք փաստեր չեն:

Եղէ՛ք Ռօ Ֆրէյզըրի նման: Երբ Մուհամմետ Ալի կանխատեսեց իր սեփական յաղթանակը 1971-ի ծանր կշիռքի բռնցքամարտի ախտեանութեան մրցումին, Ֆրէյզըր ատիկա ընդունեց իբրեւ սաղորանք: Ան դուրս եկաւ ռինկ եւ յաղթեց մինչ այդ անպարտելի համարուող մեծն Ալիին՝ դառնալով դարու մարտի հերոսը: Ուստի, յաջող աճգամ, երբ ընկերային աշխարհի մասին մտայն կանխատեսում մը լսէք, մի՛ յուսահատիք: Գտէ՛ք ձեր մէջի Ռօ Ֆրէյզըրը: Ընդվզեցէ՛ք բռնապետական կանխատեսումներուն դէմ: Եղէ՛ք ըլլանք բաւականաչափ քաջ՝ պատկերացնելու եւ պայքարելու աւելի լաւ աշխարհի մը համար: Թերեւս այդ ժամանակ բոլորս միասին կրնանք ապագան պայծառ դարձնել:

Հաննա Արենտ կը գրէր, թէ անիմաստ է մարդասպանին հետ վիճիլ այն մասին, թէ իր գոնը ողջ է թէ մեռած. միակ ճիշդ պատասխանը գոնը փրկելն է: Այսօրուան թուային մարգարեները կը կանխատեսեն մեր ազատութեան եւ ժողովրդավարութեան մահը: Մեր պարտականութիւնը ոչ թէ անոնց հաշուարկներուն հաւատալն է, այլ այդ ապագան խափանելը: Հին Հռոմի մէջ օրէնքով արգիլուած էր կայսրին մահը գուշակել, որովհետեւ գիտէին, որ այդպիսի գուշակութիւնները միշտ ալ դաւադրութեամբ կը վերջանային:

Մենք պէտք չէ հրաժարինք եղանակի կանխատեսումի ծառայութիւններէն, բայց պէտք է հասկնանք, որ մարդը օղերետութեամբ կրնայ երեւոյթ չէ: Մարդը ազատ կամքի տէր է, որ կրնայ եւ պէտք է ընդվզի իրեն պարտադրուած «հաւանականութիւններուն» դէմ: Ապագան գրուած չէ ոչ աստղերուն մէջ, եւ ոչ ալ Սիլիքոնեան Հովիտի ակորիթներուն մէջ: Ապագան այն է, ինչ մենք կ'որոշենք ընել այսօր՝ մերժելով հնազանդութեան մարգարեութիւնները:

9 Յունիս 2026, Պէյրութ



Centre for Western Armenian Studies
Արեւմտահայագիտական Ուսմանց Կեդրոն

Summer Intensive Courses in Western Armenian 2026

We are proud to announce that our flagship Summer Intensive Courses 2026 will be taking place in Athens. We look forward to welcoming students new and old to Greece to explore the beauty of Western Armenian in this historic city.

The courses will run at three levels:

Elementary: Monday 6 July–Friday 31 July 2026
Intermediate: Monday 3 August–Friday 28 August 2026
Advanced: Monday 7 September–Friday 2 October 2026

Each month-long course consists of 110 hours of teaching. The fee for each course is £1300. Scholarships are available.

ՄԷԿ ՔՐԻՍՏՈՍ, ԲԱՅՅ ԲԱԺՆՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ...

(Քաղաքագրական մեթոդներ օրերը, բաժանում, երկհասարակական եկեղեցու մասին)

(Շարունակում նախորդ թիվին)

Դուինի Ա. ժողովի գումարումով եւ քաղկեդոնականության լեզվային մերժումով, փաստօրեն, կարելի չէ Հայ եկեղեցին անջատում անկատել Բիզանդական կայսրության եկեղեցիներու դաւանութենէն, ինչպէս վերագրեալ կը վկայէ Յովնաննէ Դրասխանակերտցիին՝ երբ կ'ըսէ. «Այդ ժամանակներուն հռոմէական [բիզանդական], հայկական, վրացական եւ աղուանական աշխարհներուն մէջ հաստատում էր բոլորին համար հաւասար ու բարեպաշտ հաւատք մը»: Այս վկայութիւնը կը մատնանշէ, որ Ե. դարու վերջաւորութեան եւ Չ. դարու սկիզբը եկեղեցական միութեան գիտակցութիւնը տակաւին ամբողջովին չէր քայքայուած, իսկ դաւանաբանական սահմանազատումները չէին ստացած իրենց վերջնական եւ անշրջանցելի բնոյթը:

Մակայն Չ. դարու սկիզբը Չեմոն եւ Անաստաս կայսրերուն յաջորդները, յատկապէս Յուստինոս Ա. (518-527) եւ Յուստինիանոս Ա. (527-565), հետետողականօրէն վերահաստատեցին Քաղկեդոնի ժողովին որոշումները՝ իբրեւ կայսրութեան պաշտօնական եւ պարտադիր դաւանութիւն: Այսպիսով, Քաղկեդոնի «ի մի Քրիստոս՝ յերկուս բնութիւնս» բանաձեւը վերածուցաւ ոչ միայն եկեղեցական ուղղափառութեան, այլ նաեւ կայսրութեան նկատմամբ հաւատարմութեան չափանիշի:

Պատմաեկեղեցական այս զարգացումներուն իբրեւ վճռորոշ հանգրուան, Ներսէս Բ. Բագրեւանդացի կաթողիկոսի նախաձեռնութեամբ 554-555 թուականներուն գումարուեցաւ Դուինի Բ. եկեղեցական ժողովը: Ժողովին մասնակցութիւնը սահմանափակուած չէր միայն եկեղեցականներու դատով, այլ, Հայ եկեղեցոյ աւանդական կարգին համաձայն, ներկայ էին նաեւ նախարարական եւ ժողովրդային շրջանակներու ներկայացուցիչներ, ինչպէս կը վկայէ հայ վաղ միջնադարեան մատենագրական կոթողային յուշարձաններէն կրօնադաւանական ժողովածու «Գիրք Թղթոց»-ը. «Եւ ոչ ոք արտաքոյ մնաց յաշխարհականաց ի յայս ի կամաւոր գործոյ, ի քահանայից, ի վանականաց, ի ժողովրդականաց, ի բարետոհմից և յամենայն շինականաց»^[2]: Սոյնը ցոյց կու տայ, որ ժողովը միանշանակ կ'ընկալուէր ոչ միայն եկեղեցական, այլ նաեւ համազգային նշանակութիւն ունեցող որոշումի հանգրուան:

Դուինի Բ. ժողովը անկիւնադարձային եւ հիմնարար նշանակութիւն ունեցաւ Հայ եկեղեցոյ պատմութեան մէջ, որովհետեւ հոն պաշտօնապէս եւ վերջնական կերպով մերժուեցան թէ՛ Քաղկեդոնի Տիեզերական ժողովի դաւանաբանական որոշումները, թէ՛ Քրիստոսի մէջ «երկու բնութիւններու» բանաձեւը, թէ՛ Լեոնի տոմարը: Սոյնը Հռոմի Լեոն Ա. պապի (Ե. դար) դաւանական թուրքն էր, որ գրուած էր Քրիստոսի բնութիւններու մասին քաղկեդոնական վեճերու ընթացքին: Ան կը թելադրէր, թէ Քրիստոս ունի երկու բնութիւն՝ աստուածային եւ մարդկային, որոնք միաւորուած են մէկ անձի մէջ: Հայ եկեղեցին այս վարդապետութեան դէմ հակադրուելով ոչ միայն վերահաստատեց իր հակաքաղկեդոնական դիրքորոշումը, այլեւ եկեղեցաբանական եւ դաւանաբանական առումով վերջնականապէս խզեց իր հարողակցութիւնը Բիզանդական կայսրութեան պաշտօնական եկեղեցիին հետ:

Այս իրադարձութեան հետեւանքով Հայաստան, որ քրիստոնէութեան ընդունումէն ետք արդէն իսկ հակադրութեան մէջ մտած էր արեւակցական եւ մշակութային իմաստով իր մերձաւորութեան մէջ գտնուող Պարսկաստանի հետ, աստիճանաբար նաեւ յայտնուեցաւ Արեւմուտքի քրիստոնէական շրջանակներէն ինքնամեկուսացման մէջ: Միւս կողմէ՝ ժողովին նշանակութիւնը, սակայն, կը գերազանցէ պարզ դաւանական սահմանազատումը: Ան դարձաւ Հայ եկեղեցոյ ինքնուրոյն եկեղեցաբանական ինքնագիտակցութեան հռչակումը, ուր վերստին դրսեւորուեցաւ եկեղեցական, նախարարական, նաեւ ժողովրդային դասերու կարեւորագոյն որոշումներ կայացնելու մէջ գործակցութիւնը, եւ շեշտուեցաւ Հայ եկեղեցոյ վճռականութիւնը՝ մնալու իր ընկալած ուղղափառ հաւատքի սահմաններուն մէջ: Այս իմաստով Դուինի Բ. ժողովը ոչ այնքան նոր դաւանաբանական սկզբունքներ սահմանեց, որքան պաշտօնապէս վաւերացուց եւ ամրագրեց Դուինի Ա. ժողովէն սկսած այն ուղեգիծը, որ Հայ եկեղեցին աստիճանաբար հեռացուց Քաղկեդոնի որոշումները ընդունած Ընդհանրական կայսերական եկեղեցիէն եւ ձեւաորէն անոր իւրայատուկ եկեղեցական ինքնութիւնը:

Մշակութային եւ եկեղեցական աստիճանական օտարացումը յունաբիզանդական աշխարհէն՝ զրկեց Հայաստանը այն բնական դաշնակցային կապերէն, որոնք կրնային աւելի կայուն կերպով ապահովել ռազմաքաղաքական պաշտպանութիւն՝ յատկապէս Միջին Ասիոյ տարածաշրջաններէն դէպի արեւմուտք արշաւող հորդաներու ասպատակումներուն դէմ: Այսպիսով Հայաստան աւելի խոցելի դարձաւ եւ դարեր շարունակ ստիպուեցաւ դիմագրաւելու արտաքին ճնշումներ՝ առանց կայսերական համակարգի կայուն կամ փոխադարձ աջակցութեան:

Միեւնոյն ժամանակ այս բաժանումը բացասական հետեւանքներ ունեցաւ նաեւ Բիզանդական կայսրութեան համար, քանի որ ան կորսնցուց իր արեւելեան քրիստոնէական բնական դաշնակիցներէն մէկը եւ աստիճանաբար թուլացուց իր սահմանային պաշտպանական համակարգը: Այս փոխադարձ օտարացման եւ թուլացման գործընթացը, որ պայմանաւորուած էր դաւանական անհանդուրժողութեան ոգիով, նաեւ զուգորդուած այլ քաղաքական ու ռազմական բռնաճնշումներով, ժամանակի հոլովոյթին մէջ նպաստեց կայսրութեան ռազմավարական խոցելիութեան աճին՝ մինչեւ անոր վերջնական անկումը 1453 թուականին:

[2] «Գիրք Թղթոց, Մատենագրութիւն նախնեաց», տպ. Տ. Ռօսինեանց եւ Մ. Շարաձէ, Թիֆլիս, 1901, էջ 74:

ԴՈՎՏ. ԱՔԷԼ ՔՂՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Այսօր աստուածաբանական հետազոտութիւնները միանշանակ կը հաստատեն, որ այս դարաւոր բաժանումը ոչ այնքան հաւատքի էական հակադրութեան արդիւնք էր, որքան տարբեր աստուածաբանական լեզուամտածողութիւններու, մշակութային պայմաններու եւ քաղաքական լարուածութիւններու հետեւանք: Նոյն հաւատքի բովանդակութիւնը յաճախ տարբեր եզրերով արտայայտուած էր, եւ այդ տարբերութիւնը տեղի տուած էր փոխադարձ անհաշտելի տարակարծութիւններու: Արեւելեան հին եկեղեցիները քաղկեդոնական եկեղեցիներուն կողմէ հարիւրամեակներ շարունակ յանդիմանաբար պարտուեցան միաբնակութեան կամ մոնոֆիզիտիզմի մէջ՝ կոչուելով «միաբնակ»-ներ կամ «մոնոֆիզիտ»-ներ, մինչդեռ անոնք երբեք չէին դաւանած Քրիստոսի միայն աստուածային կամ բացառապէս մարդկային բնութիւն ունենալու վարդապետութիւնը: Իրենց կարգին, Հռոմէական կաթողիկէ եկեղեցին եւ Արեւելեան ուղղափառ եկեղեցիները ոչ-քաղկեդոնականներուն կողմէ յաճախ բնորոշուեցան իբրեւ «երկաբնակ»-ներ կամ «քաղկեդոնիկ»-ներ՝ հակառակ այն իրողութեան, որ «ի մի Քրիստոս՝ յերկուս բնութիւնս» բանաձեւով անոնք բնաւ չէին դաւանած Քրիստոսի մէջ երկու բաժնուած անձ կամ երկու իրարմէ անկախ գոյութիւն: Ընդհակառակը, այդ ձեւակերպումով անոնք կը ձգտէին պահպանել եւ դաւանիլ Քրիստոսի մէջ աստուածային եւ մարդկային բնութիւններուն ամբողջականութիւնը՝ անխառն, անշփոթ, անփոփոխ եւ անբաժան: Ժամանակակից միջեկեղեցական երկխօսութիւնները եւ աստուածաբանական ուսումնասիրութիւնները առաւել եւս կը հաստատեն, որ քրիստոսաբանական զոյգ աւանդութիւններուն միջեւ գոյացած հակասութիւնները մեծաւ մասամբ պայմանաւորուած էին տարբեր աստուածաբանական լեզուամտածողութեամբ եւ պատմական քիւրիմացութիւններով, մինչդեռ իրենց քրիստոսաբանական հաւատքի էական բովանդակութեան մէջ անոնք շատ աւելի մօտ էին իրարու, քան դարեր շարունակ կ'ենթադրուէր:

Այս խորապատկերին վրայ յատկապէս նշանակալից են մեր օրերու ուրախալի միջեկեղեցական հանդիպումները: Ահաւասիկ այդպիսի պատմական ու հոգեւոր արժէք ունեցող իրադարձութիւն մըն էր Բարբողիմէոս Ա. Տիեզերական պատրիարքին եւ Թաւուսարոս Բ. Ղպտի պապին պաշտօնական հանդիպումը 25 ապրիլ 2026-ին, Կ.Պոլսոյ Ֆանար թաղամասին մէջ: Ղպտի ուղղափառ եկեղեցոյ պապին եւ Տիեզերական պատրիարքին եղբայրական հանդիպումը պարզապէս դիւանագիտական ժեստ մը չէր, այլ դարերու բաժանումէն ետք փոխադարձ մերձեցման կենդանի վկայութիւն: Համատեղ աղօթքներուն, եղբայրական խօսքերուն եւ առաքելական ընդհանուր ժառանգութեան շեշտադրումին մէջ յստակ կերպով պարզուեցաւ, որ այսօր ուղղափառ հաւատքի միացնող տարրերը աւելի զօրեղ են, քան բաժնող պարագայական երեւոյթները: Դարերու հոլովոյթին մէջ Եկեղեցին հարըստացած է հոգեւոր տարատեսակ աւանդոյթներով եւ հաւատքի վկայութիւններով, որոնք կը դրսեւորուին ի Յիսուս Քրիստոս մէկ հաւատքի բազմազանութեան մէջ:

Այս պատճառով մեր ժամանակներու միջեկեղեցական երկխօսութիւնը կը ստանայ նաեւ բուժիչ եւ վերականգնող նշանակութիւն: Մօտ տասնվեց դարերու բաժանումէ ետք այսօր նոր յոյս մը կը ծագի, որ Քրիստոսի հանդէպ ընդհանուր հաւատքը աւելի հզօր է, քան այն պատմական ձեւակերպումները, որոնք ժամանակին բաժանման պատճառ դարձած են: Ֆանարի հանդիպումը այս իմաստով կը խորհրդանշէ քրիստոնէական փոխընդունման նոր փուլ մը՝ փոխադարձ յարգանքի, աստուածաբանական պարզաբանումի եւ հոգեւոր հաշտութեան ճանապարհ մը, ուր եկեղեցիները, առանց իրենց ինքնութիւնը կորսնցնելու, Քրիստոսի հանդէպ իրենց ընդհանուր հաւատքին մէջ կը վերագտնեն աւելի կառուցողական եւ խոր միութիւն մը:

Հայց. առաք. մեր մայր եւ սուրբ եկեղեցին, որ Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսի եւ Ս. Ներսէս Շնորհալի հայրապետի օրերէն ի վեր հետետողականօրէն բաց եւ ընդառաջող կեցումով որդեգրած է միջեկեղեցական եւ աստուածաբանական երկխօսութիւններու հանդէպ, այսօր եւս կը շարունակէ մնալ ողջախոհութեան, հաւասարակշռութեան եւ եկեղեցական հանդուրժողութեան նոյն աւանդութեան մէջ: Ան իր եկեղեցաբանական մտածողութիւնը կը մարմնաւորէ Ս. Ներսէս Շնորհալիէն աւանդուած «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս եւ սէր յամենայնի» («Էականներու մէջ՝ միութիւն, ոչ էականներու մէջ՝ ազատութիւն, եւ ամէն ինչի մէջ՝ սէր») սկզբունքով, որ դարեր շարունակ եղած է Հայ եկեղեցոյ քրիստոնէական համերաշխութեան եւ փոխադարձ յարգանքի հիմնարար սկզբունքներէն մէկը:

Այս իմաստով Հայ եկեղեցին, որպէս Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիներու ընտանիքին մէջ պատմական փորձառութիւն եւ աստուածաբանական հարուստ ժառանգութիւն ունեցող առաջամարտիկ եկեղեցի, կրնայ շարունակել իր նշանակալից եւ կառուցողական ներդրումը ունենալ եկեղեցիներու մերձեցման եւ քրիստոնէական միութեան իրագործման աստուածահաճոյ գործընթացին մէջ:

Ժընեւ, 31 մայիս 2026
Ը. օր զկնի Հոգեգալստեան,
Սկիզբն յարութեան կիրակէից,
Յիշատակ Եղիայի մարգարէին:

(Շար. 2 եւ վերջ)

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՕՆԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՆ ԽԱԺԱԿ ԱՐՔԵԴԻՍԿՈՂՈՍ ԴԱՐՍԱՄԵԱՆԻ

Ամենայն Հայոց հոգեւոր կեդրոնը՝ Սուրբ Էջմիածինը, մեր ժողովուրդի կեանքին մէջ միայն պատմական կամ կրօնական սրբավայր մը չէ, այլ՝ ազգային ինքնութեան, հոգեւոր շարունակականութեան եւ համահայկական միաբանութեան կենդանի խորհրդանիշը: Էջմիածնայ տօնը այս իմաստով պարզ յիշատակութիւն մը չէ անցեալի փառքին, այլ վերանորոգ կոչ՝ վերագտնելու մեր հաւատքին, մեր արմատներուն եւ մեր ազգային հաւաքական առաքելութեան ուժը:

Էջմիածինը դարեր շարունակ եղած է այն սրբազան կեդրոնը, ուրկէ մեր ժողովուրդը ո՛չ միայն հոգեւոր մխիթարութիւն ստացած է, այլ նաեւ ազգային փորձութիւններու պահուն՝ ուղղութիւն, տոկունութիւն եւ վերականգնման կամք: Երբ պետականութիւնը խաթարուած է, երբ հայրենի հողը ենթարկուած է վտանգներու, երբ մեր ժողովուրդը ցրուած է աշխարհով մէկ, Էջմիածինը մնացած է անշարժ առանցք մը, որ միացուցած է հայ մարդը իր պատմութեան, եկեղեցոյ եւ ազգի ապագային հետ:

Այսօր, մեր ներկայ ժամանակաշրջանին, երբ աշխարհը կը դիմագրաւէ արժեհամակարգային տատանումներ, քաղաքական անորոշութիւններ եւ ազգային ինքնութիւններու նուազման վտանգ, Էջմիածնի խորհուրդը կը դառնայ աւելի քան երբեք կենսական: Ան մեզ կը յիշեցնէ, որ ժողովուրդ մը չի կրնար մնայուն կերպով հզօրանալ միայն տնտեսական կամ քաղաքական միջոցներով, եթէ անիկա գուրկ է հոգեւոր հիմքէ, բարոյական կողմնորոշումէ եւ հաւաքական գիտակցութենէ: Սուրբ Էջմիածինը, հետեւաբար, միայն մեր անցեալի փառքի յուշարձանը չէ, այլ մեր ներկայի կերտիչն ու ապագայի լուսատրիչը:

Մեր ազգային կեանքին մէջ պետութեան եւ եկեղեցոյ յարաբերութիւնը ունի առանձնայատուկ նշանակութիւն: Անոնք տարբեր առաքելութիւններ ունին, սակայն չեն հակադրուիր իրարու, երբ կ'ուղղուին ժողովուրդի բարիքին, ինքնութեան պահպանման եւ հայրենիքի պաշտպանութեան: Պետութիւնը կոչուած է ապահովելու ազգային անվտանգութիւնը, օրէնքի գերակայութիւնը, հասարակական կազմակերպութիւններն ու զարգացման պայմանները: Եկեղեցին, իր կարգին, կոչուած է դաստիարակելու հոգեւոր առողջութիւն, բարոյական պատասխանատուութիւն, սիրոյ, ծառայութեան եւ հաւատքի արժէքներ:

Երբ պետութիւնն ու եկեղեցին, իրաքանչիւրը իր սահմաններուն մէջ, փոխադարձ յարգանքով եւ ազգային գիտակցութեամբ գործակցին, ժողովուրդը կը դառնայ աւելի ամուր, աւելի կազմակերպ եւ աւելի տոկուն: Այդ համագործակցութիւնը պէտք չէ դիտել որպէս իշխանական կամ վարչական սերտացում, այլ՝ որպէս ազգային ճակատագրի հանդէպ համատեղ ծառայութիւն: Որտեղ կայ այդ գիտակցութիւնը, հոն կը զօրանայ հասարակական համերաշխութիւնը, կը խորանայ քաղաքացիական պատասխանատուութիւնը, եւ ազգային նպատակները կը ստանան աւելի ամուր հիմք:

Մեր ժողովուրդի միասնականութիւնը այսօր առաջնահերթութիւն մըն է: Ներքին բաժանումները, անհանդուրժողականութիւնը, անհատապաշտ մօտեցումները եւ ընդհանուր շահը երկրորդական դարձնող երեւոյթները կը տկարացնեն ազգը: Էջմիածնի խորհուրդը մեզ կը հրաւիրէ վերադառնալու համագաղային մտածողութեան: Ան կը սորվեցնէ, որ հայութիւնը միայն աշխարհագրական սահմաններով չի սահմանուիր, այլ հոգեւոր, մշակութային եւ ազգային կապերով կ'ապրի: Այս առումով, Էջմիածինը համայն հայութեան տունն է՝ հայրենիքի մէջ եւ սփիւռքի տարածքին, անցեալին մէջ եւ ապագայի յոյսին մէջ:

Այսօր մեզի անհրաժեշտ է ոչ միայն զգացական կապ ազգային սրբութիւններուն հետ, այլ նաեւ գործնական վերանորոգուած յանձնառութիւն: Էջմիածնի տօնը կոչ մըն է, որ իրաքանչիւր հայ՝ պետական գործիչ, հոգեւորական, մտաւորական, ուսուցիչ, ծնող եւ երիտասարդ, վերագտնէ իր բաժին պատասխանատուութիւնը հայրենիքի հզօրացման գործին մէջ: Ազգը կը հզօրանայ, երբ իր հաստատութիւնները վստահելի են, երբ իր հոգեւոր կեդրոնները կենդանի են, երբ իր քաղաքացիները գիտեն, թէ անձնական յաջողութիւնը անբաժանելի է հաւաքական բարիքէն:

Հայրենիքի հզօրացումը չի սահմանափակուիր միայն բանակով, տնտեսութեամբ կամ դիւանագիտութեամբ, որքան ալ անոնք կենսական ըլլան: Հզօր հայրենիք կը կերտուի նաեւ հաւատքով, արժէքներով, ազգային դաստիարակութեամբ, մշակութային արթուն ներկայութեամբ եւ սերունդներու մէջ ծառայութեան ոգի արմատաւորելով: Ահա թէ ինչու Էջմիածինը, որպէս հոգեւոր հայրենիք, ունի նաեւ ազգային-պետական նշանակութիւն: Ան մեզ կը միացնէ այն տեսլականին շուրջ, թէ ազատ, անվտանգ եւ արժանապատիւ հայրենիք կարելի է կառուցել միայն այն ատեն, երբ ժողովուրդը ներսէն ամուր է:

Էջմիածնայ տօնը, ուրեմն, առիթ է ոչ միայն խոնարհումի եւ աղօթքի, այլ նաեւ ինքնաքննութեան եւ վերանորոգման: Ան մեզ կը հրաւիրէ վերատեսուել եկեղեցի առողջ գործակցութիւնը, խորացնելու մեր միասնականութիւնը եւ ամբողջական նուիրումով ծառայելու հայրենիքին: Որքան աւելի հաւատարիմ մնանք Էջմիածնի խորհուրդին, այնքան աւելի կարող պիտի ըլլանք դիմագրաւելու մեր ժամանակի մարտահրաւերները եւ կառուցելու աւելի հզօր, աւելի միացեալ եւ աւելի արժէքահեռ ազգային ապագայ:

Թող Սուրբ Էջմիածնի լոյսը շարունակէ առաջնորդել մեր ժողովուրդը՝ դէպի միաբանութիւն, իմաստութիւն, հաւատք եւ հայրենի կեանքի վերագարծումը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՒԱՐՏՈՒԵԼ ԵՆ, ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ՝ ՈՉ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԳԵՌՁ ԳԻՆԼՈՒՄԵԱՆ

Հայաստանում հետընտրական շրջանը բաւական թէժ է անցնում: Ընդդիմութիւնը, որն, ըստ Կեդրոնական ընտրական յանձնաժողովի տուեալների, պարտուել է, իշխանութեանը մեղադրում է ձայները կեղծելու, իշխանական լծակներ օգտագործելու մէջ: Վերջինս էլ ընդդիմութեանը մեղադրում է կաշառք բաժանելու մէջ: Եւ այս ամէնը, կարծես վերջ չունի:

Ընդդիմութեան անդամները մի շարք ընտրատեղամասերում վերահաշուարկ են սկսել, որի արդիւնքում յայտնաբերուել են բազմաթիւ «կորած ձայներ»: Իր հերթին «կորած ձայներ» է յայտնաբերել նաեւ գործող իշխանութիւնը՝ կարծես դրանով փորձ անելով ապացուցել, որ ինքը նոյնպէս ձայների կորուստ ունի:

Հայաստանում կուսակցութիւնների դէպքում անցողիկ շեմը 4 տոկոսն է, դաշինքների դէպքում՝ 8 տոկոսը: Քուէարկութեանը մասնակցել է 1,477,736 ընտրող: Այս պահին Կեդրոնական ընտրական յանձնաժողովի յայտարարած տուեալների համաձայն, ընտրութիւնների արդիւնքում խորհրդարան են մտնում հետեւեալ քաղաքական ուժերը.

«Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւն (Նիկոլ Փաշինեան)- 727,827 քուէ, 49,8 %:

«Ուժեղ Հայաստան» դաշինք (Սամուէլ Կարապետեան)- 340,88 քուէ, 23,28%: «Հայաստան» դաշինք (Ռուպերթ Քոչարեան)- 145,113 քուէ, 9,93%:

Իսկ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը (Գագիկ Ծառուկեան) չնչին ձայների տարբերութեամբ չի կարողանում յաղթահարել անցողիկ շեմը (58 368 քուէ, 3,9 %): Սակայն նրանք արդէն յայտարարել են, որ ձայների վերահաշուարկի արդիւնքում մի քանի ընտրատեղամասերից «կորած ձայներ» են գտել, որոնք փոխում են պատկերը եւ Ծառուկեանի թոյլ տալիս մտնել խորհրդարան:

Միս քաղաքական ուժերը դուրս են մնացել հետագայ պայքարից, քանի որ բարար չափով ձայներ չեն ստացել:

Նշենք նաեւ, որ «Քաղաքացիական Պայմանագիր»-ը (Նիկոլ Փաշինեան) թէպէտ ստացել է ձայների մեծ մասը, բայց չի կազմում սահմանադրական 2/3 մեծամասնութիւնը, ինչը թոյլ չի տալիս սահմանադրական օրէնքները միանձնեայ փոփոխել, որը մեծագոյն խնդիր է նրա համար, քանի որ որեւէ նման փոփոխութիւն կատարելու համար կարիք ունի եւս վեց մանդատի:

Տարբեր խողովակներով տեղեկութիւններ են տարածում նաեւ այն մասին, որ ընդդիմութիւնը պատրաստում է ընտրութիւնների արդիւնքները վիճարկել Սահմանադրական դատարանում, եւ վարկած կայ, որ նրանք միասնաբար չեն վերցնի իրենց մանդատները՝ խորհրդարանում ստեղծելով ֆորսմաժորային իրավիճակ: Նշենք, որ Ռուպերթ Քոչարեանն արդէն յայտարարել է երկրի բարձրագոյն դատարան դիմելու որոշման մասին:

Ձայների վերահաշուարկների արդիւնքում ամէն օր որոշակիօրէն փոխում են ընտրութեան արդիւնքները, սակայն գործող իշխանութիւնը մնում է բացարձակ առաջատար: Վերջնական, աւելի քարուն եւ հաստատ արդիւնքների մասին կը գրենք թերթի յաջորդ համարում:

Երեւան

Night with Vicken

TARPINIAN

ԳԻՇԵՐ ՍԸ ՎԻԳԷՆ ԴԱՐՔԻՆԵԱՆԻՆ ԸՆՏ

June 28, 2026
6:00 PM - 10:00 PM

Cedar's Restaurant
5 Main Avenue
Wallington, NJ 07057

Mezzeh & Refreshments included - BYOB - \$80
Payment is your reservation



THE KNIGHTS AND DAUGHTERS OF VARTAN - NJ
Info Contact
SHOGHIG: 201.803.0240
Shogh@me.com



<https://www.zeffy.com/en-US/ticketing/night-with->

ԳԼԽԱՐԿՆԵՐԸ ՄԷԿԴԻ՝ ԶԵՐ ԱՌՋԵՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴՆ Է

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՊԱՅՏԻԿ ԳԱԼԱՅՈՒՆ

Երկրորդական վարժարանի մը ասարտական հանդիսությունը կարեւոր նկատուող արարողություն մըն է, որ կը նշէ տարիներու կրթական նուիրում-ծուրբին: Ան կը նշանաւորէ ուսանողական կեանքէն յաջորդ մասնագիտական կամ բարձրագոյն կրթական փուլին պաշտօնական անցումը, միատրե- լով շրջանաւարտներուն, ընտանիքներուն եւ ուսուցիչներուն համատեղ նուա- ճումները մեծարելու համար:

Շաբաթ, 6 Յունիս 2026-ին, հաճոյքն ու պատիւը ունեցայ ներկայ գտնուե- լու ՀԲԸՄ-ի դպրոցներու միջնակարգ բաժնի ասարտական հանդիսութեան, որ իր հանդիսատար շուքով, յուզիչ պահերով եւ ոգեշնչող մթնոլորտով վերած- ւած էր կրթութեան, յաջողութեան եւ երիտասարդութեան գեղեցիկ տօնախմբ- րութեան: Այդ հանդիսությունը ոչ միայն երիտասարդ շրջանաւարտներու տա- րիներու տքնաջան աշխատանքի, յարատեւ ջանադրութեան եւ ուսումնառա- կան յաջողություններու պակասը արտայայտելու էր, այլեւ՝ հպարտութեան, երախ- տագիտութեան եւ նոր յոյսերու լուսատու սօնակատարութիւն մը: Անկէկա բացառիկ պահ մըն էր շրջանաւարտներուն, անոնց ծնողներուն, ուսուցիչնե- րուն եւ բոլոր ներկաներուն համար, որոնք հրճուանքով կը հետեւէին երիտա- սարդ սերունդի հասունացման ու նոր հորիզոններու ուղղուած վստահ երթին:

Յետադարձ հայեացք մը նետելով անցեալի էջերուն՝ հոգույս տեսադաշտ- ին առջեւ հանդիսատար շքերթով անցան անելի քան քսանհինգ տարիներու ուսուցչական ասպարէզիս յիշատակները: Տեսայ այն փորձիկ մանուկները, որոնք առաջին անգամ դպրոցի շենքէն ներս մտած էին ակնածանքով ու երագ- ներով լի աչքերով, սպա տարիէ տարի, դասարանէ դասարան, գիտութեան եւ դաստիարակութեան աստիճաններուն վրայ բարձրանալով՝ հասան երի-

Արդարեւ, ՀԲԸՄ-ի Տեմիքճեան կեդրոնի հանդիսարանէն ներս, խտունե- րամ բազմութիւն մը ի մի հաւաքուած էր ողջունելու համար շրջանաւարտ- ներու վկայականներու տուույթին: Յիրաւի ուշագրաւ էին ներկայութիւնը՝ ՀԲԸ Միութեան Լիբանանի Երջանակային Յանձնաժողովի, Կրթական Յանձնախումբի եւ ՀԵ Ընկերակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ- ներուն, ինչպէս նաեւ միութեան բազմաթիւ մարմիններու ու խորհուրդնե- րու ներկայացուցիչներու, որոնք եկած էին միասնաբար մասնակից դառնա- լու կրթական այս հանդիսութեան վայելքին:

Պահը իսկապէս խորհրդաւոր էր երբ ասարտական դասարանի աշակերտներ խորխտ քայլերով մուտք գործեցին գրա- լելով իրենց տեղերը, մինչ հնչեց Լիբանանի, Հայաստանի ու ՀԲԸՄ-ի քայլերգները: Բացման խօսքով ելոյթ ունեցաւ իրենց դաստիարակ պրն Ռ-աֆֆի Տէր Առաքել- անը, որ իր կարգին հրաւիրեց տնօրէն՝ պրն Արա Վասիլեանը փոխանցելու հա- մար կրթական խօսքը: Ան իր խօսքը ող- ղելով հանդիսատեսներուն յայտնեց. «Պա- տահական չէ, որ մեր վարժարաններէն բիրտար շրջանաւարտներ, յազեցած ու- սումնական բարձրագոյն եւ յաջողագոյն տունակներով, կոփուած ազգային-հայրե- նասիրական բոլիս զգացումներով, մարդ- կային եւ ընկերային անշէղ սկզբունքնե- րով, միշտ հաւատարիմ են իրենց դպրո- ցական, ընտանեկան, միութեանական թէ հայրենական կենդանի տեսիլք- ներուն, նոյն ոգիով եւ յղացքով շարունակելու իրենց երթը, թէ՛ ներհայկական, թէ՛ մասնագիտական, թէ՛ ասպարէզային շրջանակներէն ներս, նախ՝ կառչած մնալով իրենց ինքնութեան ակունքներուն եւ էութեան արտայայտութիւննե- րուն, ապա, դառնալով արժանի հետեւողները հայ ժողովուրդին:

Այս առումներով ու հասկացողութեամբ, ՀԲԸ Միութիւնը, ոչ միայն լիացած է իր առաքելութեամբ, այլեւ՝ ոգեւին հպարտ է, որ իր ծոցէն ծնած, սնած եւ աճած սերունդները, արդարացուցած են իրենց վրայ դրուած յոյսերը ու պար- տաւորութիւնները:

Ատոնց յաւազոյն ապացոյցներն են այն շրջանաւարտները, որոնք՝ հոս թէ այլուր, կը փայլին իրենց ազգային պատկանելիութիւններու չափանիշներով, իրենց միջավայրային հեղինակութիւններով, իրենց մասնագիտական յաջո- ղութիւններով, ինչ որ կ'արտայայտէ ու կը հաստատէ, թէ անելի քան մէկդարե- տայ Միութիւնը, ինչպէս այլ մարզերու պարագային, նաեւ կրթական բնագա- ւառներէն ներս, կը գտնուի իր հարազատ պարունակին մէջ, անայլայլ շարու- նակելու իր վերելքն ու ծառայութիւնները, յամուն իր ժողովուրդին ու համա- տարած հօտին կարիքներուն եւ օժանդակութեանը»:

Վաստակաւոր Տնօրէն՝ Պրն. Արա Վասիլեանի բեղուն, առարկայական ու համապարփակ խօսքը, իր հարուստ գիտելիքներով, տեղեկագրութիւններով ու մանրամասններով, անելի քան նշանակելի եւ իմաստալի էր, իր բովանդակու- րեամբ, տունակներով եւ իրագործումներով, որոնք լոյսին կը բերէին, թէ մեր վարժարանները ինչպիսի յառաջդիմութիւններով եւ յաջողութիւններով հա- մալրուած եւ օժտուած էին:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ վկայականաց եւ մրցանակներու բաշխման արարողութիւնը ձեռամբ՝ ՀԲԸՄ-ի Լիբանանի Երջանակային Յանձնաժո- ղովի Գանձապահ՝ Պրն. Յակոբ Տանձիկեանի, ՀԲԸՄ-ի Կրթական Յանձնա- խումբի Ատենադպիր՝ Պրն. Մայք Կիրիթեանի, Նոյն յանձնախումբի անդամ Տիկ. Սինթիա Մենտիլեանի, Վարժարանի Տնօրէն՝ Պրն. Արա Վասիլեանի:

Սոյն հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը հարստացաւ, շրջա- նաւարտներու սրտի շնորհակալիքի ու դրուատիքի ջերմ, սրտառուչ, անմիջա- կան եւ անկեղծ մտորումներով, բարձրաձայնուած լուրջ դիտարկումներով: Էնտրու Յակոբեան (հայերէն), Լուիս Պապահեքեան (Արաբերէն), Ժանեթ Դունթոյեան (Անգլերէն), Դորճիօ Քլէյանի (Ֆրանսերէն): Պէտք է խոստովա- նիլ, թէ գեղարուեստական յայտագիրը տպաւորիչ էր, կոկիկ ու հաղորդական, որուն իրենց մասնակցութիւնը բերին շրջանաւարտներէն՝ Մարք Ֆըրընզեան դաշնամուրի վրայ նուագեց՝ («Laura Palmer's Theme», Angelo Badalamenti): Իսկ գեղեցիկ մենապարով հանդէս եկաւ Ժանեթ Դունթոյեան Աննօ Պապա- ճանեանի «Էլեկիս» երաժշտութեան ներքոյ: Երախտագիտական խօսք ար- տասանեցին Հրաչ Կեպեկեան եւ Սէրլի Ստեփան, որուն յաջորդեց խմբերգ մը՝ «Those Were the Days», մենակատարութեամբ՝ Փերլա Գոնիլեանի եւ դաշ- նամուրի ընկերակցութեամբ՝ Պրն. Ռ-աֆֆի Տէր Առաքելեանի: Խորհրդաւոր

տասարդութեան շենքն ու հպարտօրէն ստացան իրենց ասարտական վկա- յականները: Անոնք եւս ճամբայ ելան դէպի համալսարանական աշխարհ՝ հետապնդելու իրենց կոչումն ու երազանքները:

Այսօր այդ սերունդներու զաւակները՝ հպարտութիւնը մեր վարժարաննե- րուն, կեանքի լայն ու բազմազան ասպարէզին մէջ կը գործեն արժանապա- տի կերպով՝ որպէս բժիշկներ, ճարտարագէտներ, իրաւաբաններ, մանկա- վարժներ, գիտնականներ եւ բազմաթիւ այլ մասնագիտութիւններու կրողներ: Անոնք իրենց հետ կը կրեն ոչ միայն մասնագիտական հմտութիւններու հա- րուստ պաշար մը, այլեւ հոգեւոր ու բարոյական այն արժէքները, որոնք սեր- մանուած էին իրենց հոգիներուն մէջ ՀԲԸՄ-ի վարժարաններու դպրոցական տարիներուն ընթացքին:

Անոնք այսօր երախտագիտութեամբ կը խոնարհին իրենց ուսուցիչներուն յիշատակին առջեւ, որոնք ոչ միայն գիտելիք փոխանցեցին, այլեւ սիրով, համ- բերութեամբ ու նուիրումով կերտեցին անոնց նկարագիրը, ուղղեցին անոնց քայլերը եւ լուսաւորեցին անոնց մտքի ու հոգույ աշխարհը: Այդ նուիրեալ դաստիարակներուն ջանքերով է, որ սերունդներ կազմաւորուեցան՝ ազգային գիտակցութեամբ, մարդկային բարձր արժէքներով եւ ծառայութեան ոգիով:

Այսպէս, ՀԲԸՄ-ի դպրոցները ցարդ կը շարունակեն իրենց լուսատու առաքե- լութիւնը՝ սերունդէ սերունդ փոխանցելով գիտութեան լոյսը, ազգային ինքնու- թեան ջահը եւ մարդկային ազնիւ արժէքներու ծառանգութիւնը՝ դառնալով հայ կրթական կեանքի ամուր սիւներէն ու հպարտութիւն ներշնչող օճախներէն մէկը:

Եր յատկապէս այն պահը, երբ շրջանաւարտներ միասնաբար հանդէս եկան «Աւարտականներու ուխտ»-ով մը, խոստանալով ըլլալ գիտակից հայեր, լի պատասխանատուութեան գիտակցութեամբ:

Յայտագրի ասարտին, «ժուսկ բանք»ով հանդէս եկաւ ՀԲԸՄ-ի վարժարաններէն շրջանաւարտ նախկին սաներէն՝ Պրն. Սե- անկ Հաճէքեան, որ իր դպրոցական տա- րիներու փորձառութեանց լոյսին տակ եւ իր ուսումնական ու դաստիարակական գիտելիքներու իրացումներով, գրաւած էր բաղձալի դիրքեր, որուն համար երախտա- պարտ էր, թէ՛ իր վարժարանին, թէ՛ Միու- թեան, հետեւաբար, իր խորհրդածութիւն- ներով դառնալով բարձրագոյն իր սերնդա- կիցներուն, որոնց հետ, միասնաբար ու հաւաքաբար, կրթական բարձրագոյն չա- փանիշներով, հասած են իրենցմէ ակըն- կալուած փայլուն արդիւնքներու, ինք դառ- նալով անոնց մէկը, Միութեան վարկը, վարժարանին համբաւը եւ հայութեան պատկանելիութիւնը բարձր պահելու ար- ժանատուութեամբ:



Սեանկ Գաճէքեան

Յետ հանդիսութեան արարողութենէն ետք, ՀԲԸՄ-ի Տեմիքճեան կեդրոնի բացօթեայ պատշգամբին մէջ տեղի ունեցաւ ասանդակական կարկանդակի հա- տույնը, որուն ընթացքին շրջանաւարտները ընդունեցին հարազատներու, ու- սուցիչներու եւ հիւրերու ջերմ շնորհանորանքներն ու բարեմաղթանքները: Տի- րող մթնոլորտը բացառապէս գեղեցիկ էր՝ լեցուն երիտասարդական խանդա- վառութեամբ, կենսունակութեամբ եւ ձեռքբերումներու արդար հպարտու- թեամբ: Ամէնուր կը տիրէր յաղթանակի, բերկրանքի եւ նոր հորիզոններու հանդէպ վստահութեան զգացումը, որ ասարտական այս հանդիսութիւնը կը դարձնէր իսկապէս անմոռանալի:



Արդարեւ, պատուաբեր հունձք մը, հպարտալի հոյլ մը, խոստմնալից սե- րունդ մը՝ կոչուած միանալու ՀԲԸՄ-ի վարժարաններու այն ընտիր շրջանա- ւարտներու փաղանգին, որոնք տարիներ շարունակ իրենց վաստակով, ծա- ռայութեամբ եւ ձեռքբերումներով կը պայծառացնեն ազգային մեր կեանքն ու կը կերտեն վաղուան անելի լուսեղէն հորիզոնները:

ՊԱԶԱՆՈՐԻԱ ԸՆԿԵՐԱՆՆԵՐՍՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
SOCIO-ECONOMICS
 ՊԱՊԱՀԷՔԵԱՆ ԼՈՒՆԱ **, ՍՏԵՓԱՆ ՍԵՐԼԻ, ՖԵՐՆԵԶԵԱՆ ՍԱՐՔ, ԳՆԻՆԹՈՅԵԱՆ ԺԱՆԷԹ *, ԶԼԷՅԱՆԻ ԳՈՐԾԻՕ, ԳՈՂԵՆԵԱՆ ՓԵՐԼԱ ԹԱԳԻՐԵԱՆ ՎԱՐԱՆԴ, ԿԷՊԵՆԵՆԵԱՆ ՀՐԱՉ *

ՊԱԶԱՆՈՐԻԱ ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ
GENERAL SCIENCES
 ՅԱԿՈԲԵԱՆ ԷՆՏՐՈՒ **, ԳԱԼԱՅՈՒՆ ՓԱՈՒԼՕ **, ԳՈՂԱՅԵԱՆ ԱԼԵԹՍ

** Բարձր Պատուոյ Յիշատակութիւն, * Պատուոյ Յիշատակութիւն

ԹԵՔԵԱՆ ՄՉԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ - ԼԻՔԱՆԱՆ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՍԵՐՈՒՆԴԻ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ»-Ի ՆՇՈՒՄԸ

Դպրոցական կեանքը անգնահատելի հարստություն է, որ տարիներու ընթացքին ատելի եւս կ'արժեւորուի: Դպրոցական տարիները կ'ամփոփուին «Վերջին Զանգ»-ի արարողութեան մէջ: Այդ օր ուրախութեան եւ թախիծի զգացումներով համակուած՝ դպրոցականները շնորհակալութեան եւ հրաժեշտի խօսքեր կը ձօնեն իրենց ուսուցիչներուն, ինչպէս նաեւ իրենց սիրելի վարժարանին:



Հետեւաբար, Հինգշաբթի, 4 Յունիս 2026-ին մեր վարժարանի Յակոբ Պարսամեան սրահէն ներս նշուեցաւ «Վերջին Զանգ»-ը: Յայտագիրը ընթացք առաւ քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ, որմէ ետք Միջն. Գ. դասարանի աշակերտները բեմահարթակ բարձրանալով ներկայացան իրենց սրտի խօսքերով (հայերէն, անգլերէն եւ արաբերէն), ապա տեղի ունեցաւ տեսերիզի ցուցադրութիւն պատրաստուած Միջն.Գ. դասարանի դաստիարակչուհի՝ Օրդ. Սիւզան Թազեանի կողմէ:

Մթնոլորտը ճոխացնելու համար, մեր սիրելի շրջանաւարտները ներկայացուցին գեղեցիկ պար մը, որմէ ետք երկար հնչեց վերջին զանգը՝ ազդարարելով ներկայ հանգրուանին աւարտը ու նոր հանգրուանի մը սկիզբը: Ապա ՄԵՄ եւ Միլվա Միմոնեան մանկապարտէզի Ծաղիկ դասարանի աշակերտները բեմահարթակ բարձրանալով մէկական պզտիկ զանգակներ նուիրեցին Միջն. Գ. դասարանի աշակերտներուն, որոնք իրենց կարգին մէկական թարմ ծաղիկ նուիրեցին փոքրիկներուն եւ միասնաբար երգեցին Թաթայի «Վերջին Զանգ»-ը:



Վերջապէս, շրջանաւարտները ջահ մը բռնած՝ Միջն. Բ. դասարանի աշակերտներուն հետ միասին՝ մուտք գործեցին սրահ ու ջահը փոխանցեցին անոնց: Վարժարանի Տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Մեմերճեան Տարագճեան խօսքով մէջ դիմելով աշակերտներուն ըսաւ. «Այսօր կը փակուի ձեր դպրոցական կեանքի մէկ կարեւոր փուլը՝ Միջնակարգի հանգրուանը, որ պիտի մնայ որպէս ձեր կեանքի ամենաթանկ յուշերէն մէկը: Դուք կը հանդիսանաք մեր վարժարանի հիմնադրութեան 75-ամեակի յոբելեանական սերունդը՝ այս պատմական տարուան անբաժան մասնիկը, որ իր հետ կը կրէ հպարտութիւն եւ արժէք»: Տնօրէնուհին սրտանց շնորհատրեց աշակերտները այս յիշարժան օրուան առիթով՝ կոչ ուղղելով, որ անոնք շնորհման այցելել իրենց սիրելի երկրորդ տունը:

Հուսկ, ուսուցչակազմն ու շրջանաւարտները խմբուեցան կարկանդակին շուրջ ու բարեմաղանքներով հատեցին զայն: Նոյն օրը, նաեւ տեղի ունեցաւ իւրաքանչիւր կրթական տարեշրջանի աւարտին, սովորութիւն դարձած «Ձեռնային Աշխատանքներու Ցուցադրութիւն»-ը: Հետեւաբար, դասարան առ դասարան, մեր բոլոր աշակերտները շրջեցան ու դիտեցին ամբողջ տարեշրջանի մը վրայ երկարող՝ իրենց մտայղացումով իրականացուած հիանալի աշխատանքները: Մեր սիրելի շրջանաւարտներուն կը մաղթենք բեղմնաւոր ուսումնական կեանք եւ յարաճուն վերելք՝ հասնելու համար իրենց նպատակակէտին:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒՄԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ 2025-2026 ՏԱՐԵՆՐՁՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐԸ ՆՇՈՒԵՅԱԿ 75-ԱՄԵԱԿԻ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՇՈՒՔՈՎ

Ուրբաթ, 5 Յունիս 2026-ին, վարժարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ աւանդական մարզական օր՝ խանդավառութեամբ, մրցակցային առողջ ոգիով եւ աշակերտական ուրախ տրամադրութեամբ:

Օրուան ընթացքին աշակերտները մասնակցեցան բազմազան մարզական մրցումներու եւ խաղերու՝ դրսեւորելով իրենց կարողութիւնները, համագործակցութեան ոգին եւ յաղթանակի ձգտումը:

Այս առիթով, վարժարանի հիմնադրութեան 75-ամեակին նուիրուած յոբելեանական ձեռնարկներու ծիրէն ներս, աշակերտներուն բաժնուեցան յատուկ պատրաստուած յիշատակի վերնաշապիկներ եւ գլխարկներ, որոնք տարբեր բնոյթ մը ստեղծեցին մարզական օրուան եւ ատելի եւս ամրապնդեցին աշակերտներուն պատկանելիութեան զգացումը:

Ձեռնարկին յատուկ շուք հաղորդեց օրուան պատուաւոր հիւրը, ԹԵՔԵԱՆԳԻ ՆԱԽՏԻԿԻՆ շրջանաւարտ՝ Գեորգ Գեորգը, որ իր մարզական ձեռքբերումներով կը շարունակէ պատիւ բերել իր դպրոցին: Ան սիրալոյսով կերպով հաղորդակից դարձաւ աշակերտներուն մարզական փորձառութեան, քաջալերեց զանոնք՝ յորդորելով, որ հետեւողական աշխատանքով եւ նուիրումով հետապնդեն իրենց նպատակները: Ան եղաւ ներշնչման աղբիւր աշակերտներուն համար:



Մարզական օրուան աւարտին վարժարանի տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Մեմերճեան Տարագճեան յատուկ յուշանուէրով պատուեց օրուան հիւրը, ինչպէս նաեւ անոր յանձնեց վարժարանի 75-ամեակը խորհրդանշող վերնաշապիկ մը:

Ուրախութեամբ կը նշենք նաեւ, որ մարզական օրուան ներկայ էին վարժարանի քաղաքացի նախկին սաներ, որոնց մասնակցութեամբ օրը վերածնունդ գեղեցիկ հանդիպման մը՝ ամրապնդելով վարժարանի սերունդներուն միջեւ գոյութիւն ունեցող կապը եւ պատկանելիութեան ոգին: Մոյն օրը աշակերտները, ուսուցիչները, ծնողաց յանձնախումբը, նախկին սաներն ու հիւրերը առիթ ունեցան միասին վայելելու օրուան հաճելի պահերը՝ ջերմ եւ բարեկամական մթնոլորտի մէջ:



Մրցումներու ընթացքին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, տրամադրուած բարեբարեք Տիկ. Ալիս Աւագեանի եւ իր դուստրերուն թէքեանցի նախկին շրջանաւարտներու՝ Անի եւ Թալին Աւագեաններու կողմէ:



Մարզական օրը անգամ մը եւս հաստատեց, որ մարմնակրթութիւնը, մարզական ոգին եւ հաւաքական աշխատանքը կարեւոր դեր կը կատարեն աշակերտներուն համակողմանի դաստիարակութեան մէջ՝ նպաստելով առողջ, ինքնավստահ եւ պատասխանատու սերունդի կազմաւորման:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐժԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒՄԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ

Լեզուական սայթաքումներ

ՍԽԱԼԼ ԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԸ ՇՐՋԱՊԱՏԵՆ ՄԵՋ ԱՄԷՆՈՒՐԵՔ...

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Հետևեալ հատուածը կ'արտագրեն մամուլէն. -- Հաճոյքով կը ներկայացնենք Վազգէն Շուշանեանէն երկու գրութիւններ, զոր մեզի տրամադրեց Հ.-ի արխիւատունը (անոր քով պահ կը մնան ողբացեալ գրագէտին անտիպներուն մեծ մասը):

Առաջին ակնարկով անթերի պիտի թուին վերի տողերը: Բայց... հոն կայ քերականական երկու սխալ:

Ընթերցողներս պիտի չչարչարեն: Անմիջապէս պիտի նշեն վրէպները, որոնք դարանակալ թշնամիներու մնացած պահուրտեր են տողերու արանքին, գրեթէ աննշմարելի ու աներեւոյթ կերպարանքով:

ՍԽԱԼԼ ԹԻՒ 1.- «... գրութիւններ, զոր մեզի տրամադրեց»: «Ձոր»-ը եւ «գորս»-ը փորձանք դերանուններ են մեր օրերուն, որովհետեւ կու գան գրաբարէն: Իսկ մենք գրաբար գիտե՞նք:

Այս գոյգը մաս կը կազմէ յարաբերական դերանուններու ցուցակին՝ որպէս «որ»-ի ու «որոնք»-ի հայցական հոլովը: Թէեւ աշխարհաբարը մեզի կը թելադրէ սա վերջին դերանունները (որ ու որոնք) օգտագործել իբրեւ թէ՛ ուղղական ու թէ՛ հայցական հոլովածներ, այնուհանդերձ շատ-շատեր փորձուքիւնը կ'ունենան գործածելու անոնց գրաբարածէ տարբերակները ու... կը սայթաքին իրենց առաջին քայլին վրայ իսկ:

«Ձոր»-ը կը գործածուի լոկ եզակի գոյականներու հետ (ինչպէս «որ»-ը), իսկ «գորս»-ը վերապահուած է յոգնակի գոյականներուն (ինչպէս «որոնք»-ը): Ասիկա՛ եթէ անպայման կը փափաքինք գործածել գրաբարածէ այս դերանունները: Այլապէս՝ «որ»-ն ու «որոնք»-ը լիովին կը բաւարարեն աշխարհաբարի պահանջները:

Այս բացատրութիւններէն մեկնելով, ուրեմն, վերի նախադասութիւնը պարտինք գրել սապէս. «Հաճոյքով կը ներկայացնենք Վազգէն Շուշանեանէն երկու գրութիւններ, ՉՈՐՄ (կամ՝ ՈՐՈՆՔ) մեզի տրամադրեց Հ.-ի արխիւատունը»:

ՍԽԱԼԼ ԹԻՒ 2.- «Անոր քով պահ կը մնան ողբացեալ գրագէտին անտիպներուն մեծ մասը»:

Նախադասութեան ենթական «մասը» գոյականն է, իսկ ստորոգիչը՝ «կը մնան» բայը:

Ենթական դրուած է եզակիով, իսկ ստորոգիչը՝ յոգնակիով...: Թուային անհամատեղելիութիւն: Երկու ձեւ կրնան առաջարկել՝ սխալը դարմանելու համար.

-- «Անոր քով պահ ԿԸ ՄՆԱՅ ողբացեալ գրագէտին անտիպներուն մեծ մասը»:

-- «Ողբացեալ գրագէտին անտիպները, մեծ մասամբ, պահ ԿԸ ՄՆԱՆ անոր քով» (այստեղ «մեծ մասամբ»-ը միջանկեալ նախադասութիւն է: «Անտիպները» յոգնակի գոյականը վերածուեցաւ ենթական):

Քաղաքական վերլուծումներու հմուտ մեկնաբան մը դիմատետրային իր վերջին գրառումին մէջ արձանագրած էր հետեւեալը.

-- Ինչո՞ւ Մոսկուա պատասխանատու չ'ըզգար Արցախի ինքնորոշման դատը Մոսկուայի օրակարգէն դուրս բերելու:

Առաջին արագ ընթերցումով թերեւս ո՛չ մէկ սխալ նկատէք այս նախադասութեան մէջ: Եւ սակայն... հոն դա՛րձեալ կայ երկու սխալ:

Ա) «Ձգալ» բային ժխտական ներկայ ժամանակը խոնարհուած է սխալ ուղղագրութեամբ: «Պատասխանատու չ'ըզգար»-ը անընդունելի ուղղագրած է: Պէտք է գրել «ՉԻ ԶԳԱՐ»: Ինչո՞ւ:

Մտահան մի՛ ընէք բնաւ, որ ժխտական խոնարհումի ներկայ ժամանակի Գ. դէմքը միշտ «չի» կ'առնէ: Չի գրեր, չի խօսիր, չի կարդար: Երբոր բայը ձայնատարով կը սկսի, վերոնշեալ «չի»-ին «ի» տառը կ'իյնայ ու կը փոխարինուի ապաթարցով: Օրինակ՝ չ'աղօթեր (փոխան «չի աղօթեր»-ի), չ'ելլեր, չ'ընթերցեր, չ'իյնար, չ'որսար, չ'օգնէր...:

Ինչ կը վերաբերի զա, շա եւ սէ տառերով սկսող այն բայերուն, որոնց սկիզբը ստղ ըք մը կը հնչուի, անոնք բացարձակապէս չեն զիջիր իրենց «չի»-ն: Ուրեմն, կը գրենք ու կ'արտասանենք ՉԻ ԶԳԱՐ, ՉԻ ԶԲԱՂԻՐ, ՉԻ ՍՊԱՍԵՐ, ՉԻ ՍՊԱՌՆԱՐ, ՉԻ ՇՏԱՊԵՐ...:

Վերի սխալը կ'իյնայ այս ծիրին մէջ:

Բ) Միեւնոյն նախադասութեան մէջ ԵՐԿՈՒ անգամ գործածուած է «Մոսկուա» բառը: «Մոսկուա պատասխանատու չի զգար... Մոսկուայի օրակարգէն դուրս բերելու»:

Հապա ո՞ր օրուան համար են դերանունները...: Ուրեմն, օգտագործելով յարմար դերանունը՝ նախադասութիւնը վերակազմենք սա՛ ձեւով.

-- Ինչո՞ւ Մոսկուա պատասխանատու չի զգար Արցախի ինքնորոշման դատը ԻՐ օրակարգէն դուրս բերելու:

Դարձեալ կը բանամ սփիւռքեան մեր օրաթերթերէն մին: Միշտ ու միշտ կ'ապրին նոյն յուսախաբութիւնը, որովհետեւ թերթին էջերուն մէջ չեն տեսներ մեր մայրենիին ճշգրիտ գործածութեան ուղղութեամբ առնուած որեւէ քայլ, որեւէ ինքնաարբագրութիւն: Թափփածութիւնը կը յա-

ԼԵՐՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

րատելէ՛...: Խմբագիր եւ օգնականներ թմբիրի մէջ են: Կը քննան մշի՛կ-մշի՛կ...:

Ես այս թերթը կը մանցնեմ ծառի մը, որուն ճիւղերէն սխալները կախուած են... ողկոյզներու պէս: Չէի՞ք ուզեր քանի մը ողկոյզ ճաշակել: Ահա՛սաիկ:

-- Այլեւ մերժած է ընդունիլ Պելճիքայի արտաքին նախարարին՝ հայա-մետ ըլլալուն համար:

«Նախարար» բառը նախադասութեան ուղիղ խնդիրն է, ուստի անիկա դրուած պէտք է ըլլար հայցական հոլովով: Այդքան դժուար է այս օրէնքը սորվիլը: Յետոյ, յայտնի չէ թէ ո՞վ է «հայամետ»-ը. Այլե՞ւր, թէ՞ Պելճիքայի արտաքին նախարարը...:

Գրեցէ՛ք՝ «Այլեւ մերժած է ընդունիլ Պելճիքայի արտաքին ՆԱՍԱՐԱՐԸ, ԱՆՈՐ հայամետ ըլլալուն համար»: Յստակ:

-- Ռոս գործիչին արգիլած են Ատրայէճան մուտքը:

Գեղեցիկ հայերէն մը չէ ասիկա: Օտարոտի շունչ մը կը թեւածէ նախադասութեան վերեւ: Կ'առաջարկեմ հետեւեալ 2 տարբերակները.

Ա) Արգիլած են ռոս գործիչի մը Ատրայէճան մուտքը:

Բ) Արգելք՝ ռոս գործիչի մը Ատրայէճան մուտքին:

-- Արցախի ԱԺ ՀՅԳ-ական պատգամատուրը յայտնած է թէ...:

Աստուծոյ սիրոյն՝ ըսէ՛ք, թէ ինչպէ՞ս կարդանք այս նախադասութիւնը: «Հօյիղայական պատգամատուր» ըսենք: Ո՞ր լսուած է մնան բան...: Ինչո՞ւ պարզ ու յստակ չենք գրեր՝ «դաշնակցական պատգամատուրը յայտնած է թէ...»: Ինչո՞ւ կ'այլանդակենք բառերը...:

-- Կազայէն անցած է հացի կտրոնով մատակարարման:

Այս պէս հայերէն է եղեր...:

Կազայէն (ուր Երրայական պետութիւնը նորօրեայ ցեղասպանութիւն մը կիրարկեց՝ արար աշխարհի աչքին առջեւ) հացի սուր տագնապ ունի անշուշտ, իսկ մենք ալ կ'ապրինք... լեզուական տագնապ մը:

Նախ, վերի նախադասութիւնը ունի ուղղագրական սխալ մը՝ կտրոն:

Պէտք էր գրուէր ԿՏՓՕՆ: Յետոյ, ի՞նչ ըսել է «անցած է կտրոնով մատակարարման»: Չէի՞ք կրնար գրել՝ «Կազայի մէջ հացը կը մատակարարուի կտրոնով»: Պարզ ու յստակ:

**

Այս քաղուածքն ալ լուս-անճելլսեան թերթէ մը: Ի սկզբանէ գիտեմ, թէ այս լրագրին բովանդակութիւնը զիս բնաւ չի գոհացներ: Ուստի՛ կը բաւարարուիմ միայն վերնագրերը կարդալով: Բայց...

Բայց այնքա՛ն անխնամ կը խմբագրուի այս թերթը, որ սխալագրութիւններով կը տպուին մինչեւ իսկ անոր վերնագրերը...: Կատակ չէ որ կ'ընեն, ոչ ալ՝ ամբաստանութիւն:

Ահա՛ կը կարդամ Ա. Էջէն վերնագիր մը. «Անգարա զգուշացուցած է Յունաստանին»:

Միշտ ու միշտ նոյն սխալը: Ակներեւ է որ պր. խմբագիրը բոլորովին անտեղեակ է խնդրառութեան օրէնքներէն...

Պէտք էր ըսել՝ «Անգարա զգուշացուցած է Յունաստանը»: Նախադասութեան ենթական Անգարան է, իսկ ուղիղ խնդիրը՝ Յունաստանը: Ինչպէս ըսած էինք նախապէս ալ, արեւմտահայերէնի մէջ ուղիղ խնդիրը միշտ կը դրուի հայցական հոլովով:

Դարձեալ Ա. Էջէն՝ ուրիշ վերնագիր մը. «Այս իշխանութիւնն անգամ սեփական տարածքն է զլանում ոտնձգութիւններից պաշտպանել»:

Փորձանք բառ մըն է «անգամ»-ը, որ ունի իմաստային այլազան երանգներ ու հոս գործածուած է «նոյնիսկ»-ի, «մինչեւ իսկ»-ի իմաստով: Տգեղ է թերթին որդեգրած շարահիւսութիւնը: Յետոյ, ինչո՞ւ արեւելահայերէնով տրուած է այս տողը, երբ անիկա չակերտի մէջ ալ առնուած չէ արդէն իբրեւ մէջբերում: Չայն պէտք էր գրել սա՛պէս. «Այս իշխանութիւնը մինչեւ իսկ կը զլանայ իր սեփական տարածքը պաշտպանել ոտնձգութիւններէ»: Յստակ ու վճիտ:

Եւ ահա երրորդ վերնագիր մը թերթին ներքին էջերէն. «Չինաստանի դեսպան. Բոլորը չէ որ կ'ուզեն Չինաստանի եւ Հայաստանի յարաբերութիւնները զարգանան»:

Այսպէս ըսել է եղեր Երեւանի չին դեսպանը: Շա՛տ բարի: Վստահաբար ան արտայայտուէր է կոկիկ չինարէնով, բայց անոր հայերէն թարգմանութիւնը... հայերէն չէ:

Ի՞նչ կը նշանակէ «բոլորը չէ որ կ'ուզեն... զարգանան»: Այս որքա՛ն խայտառակ ու ռամիկ հայերէն է, Աստուա՛ժ իմ:

«Ուզել» բայը ներգործական է ու հետեւաբար կը պահանջէ հայց. հոլով ուղիղ խնդիր մը: Հոս՝ որպէս այդպիսին դրուած է «զարգանան» բայը, լրրճելով Մետրոպի քաղցրաբարբառ լեզուն...:


Հարկ էր գրել սա՛պէս. «Բոլորը չէ որ կ'ուզեն Չինաստանի եւ Հայաստանի յարաբերութեանց ՁԱՐԳԱՑՈՒՄԸ» (վերջին բառը, որ ուղիղ խնդիրն է, դրինք հայց. հոլովով):

Այսօր ալ այսքան:

ՕՍԱՆՆԵԱՆ ԲԱՆԱԿԻ ՄՊԱՅ ԳԱԼՈՒՍՏ ՍԻՐՄԵՆԵԱՆԻ ՅՈՒՆԵԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Օսաննեան Սահմանադրության վերահռչակումն էտք Խորհրդարանը օրենք ընդունեց՝ ոչ-խլամ օսանցիներու բանակի ծառայութիւնը: Հայերն ունանք վատահոփին չունենալով թուրքին, կը խուսափէին բանակ երթալէ, իսկ ուրիշներու համար բանակի ծառայութիւնը խիստ անհրաժեշտ նկատուելով կը տենչային բանակին ծառայել, կարենալ զէնքերու գործածութեան ու վարժութեան գիտակ դառնալ: Դիշդ պիտի ըլլար ըսել թէ հայերը գրկուած էին զինուորական ծառայութենէ եւ հետեւաբար արգիլուած էր անոնց զինավարժութիւն ընել. հակառակ ասոր, հայերը տարեկան տուրք ալ կը վճարէին պետութեան զէնք կրելու իրաւունքէն գրկուած ըլլալով հանդերձ: Իսկ թուրքեր գրկելով հայերը բանակի ծառայութենէն, առնուազն երկու բան կը հետապնդէին միանգամայն. առաջինը՝ հայը անզէն կը մնար, ինչ որ ձեռնտու էր թուրքին, իսկ երկրորդը՝ անզէն մնալու այս «չնորիք»-ին համար հայը ամէն տարի պարտադիր տուրք ալ կը վճարէր պետութեան:



Երզնկայի հայոց Առաջնորդարանը, 1907թ.

Գալուստ Սիրմէնեան Օսաննեան բանակի սպայ, Ա. Համաշխարհային Պատերազմի տետրութեան, օսաննեան, ապա Հայաստանի Հանրապետութեան բանակին մէջ իր ծառայութեանց եւ ընդհանուր կացութեան նկարագրութիւնն ու պատումը կ'ընէ իր հեղինակած յուշագիրքին մէջ, «Տաճկահայ Ձինուոր Եւ Ձինուորականութիւնը» վերնագրով, «Համազգային»-ի հրատարակութիւն, Պէյրութ, 1967, միջակ չափի 121 էջ:

Գալուստ Սիրմէնեան կը տենչար օսաննեան բանակ մտնել եւ զինավարժութիւն սորվիլ: Սահմանադրութեան հռչակումով, ներկայացուած առիթն օգտուելով, ան զինավարժութեան եւ զէնք կրելու հանգամանքէն հրապուրուած քանի մը ուսանող հայ ընկերներու հետ բանակ կը մտնէ: Օսաննեան Դ. բանակի կեդրոն, Երզնկայի զինուորական Բիւշտիկ եւ Էտաշիկ վարժարանները կ'աւարտէ ու 1910-ին կը մեկնի Կ. Պոլիս, կը մտնէ Բանկայի զինուորական վարժարանը՝ Հարպիէ, որ 1400 աշակերտ ունէր: Վարժարանի տնօրէնն էր Վեհիպ պէյ (այն ատեն զնդապետ, ետքը՝ փաշա եւ Կովկասեան ճակատի հրամանատար):

Գալուստ Սիրմէնեան կ'ըսէ թէ հայերը սկսան օսաննեան բանակին ծառայել եւ անի ուղի դէպքերը պարզեցին որ անոնք բացառիկ ընդունակութիւններու տէր են: Թուրք բարձրաստիճան զինուորականներ իրենց տան եւ գործին մէջ աշխատող թուրք զինուորները փոխարինեցին հայերով, որոնք շուտով տասնապետի կամ ենթասպայի աստիճան ստացան: «Հետագային դէպքերը եկան փաստելու որ հայը ոչ միայն լաւ առեւտրական կամ արհեստաւոր է, այլ նաեւ քաջ զինուոր» (էջ 12), կ'աւելցնէ հեղինակը: Հայ զինուորները Պալքանեան թէ Ա. Համաշխարհային պատերազմներուն բազմաթիւ քաջագործութիւններ արձանագրեցին, կ'ըսէ ան:

Գալուստ Սիրմէնեան զինուորական դպրոցը աւարտելէ անմիջապէս ետք, Ա. Համաշխարհային պատերազմը կը պայթի եւ բանակի հրամանատարութիւնը զինք իր ծննդավայրը՝ Երզնկա կը դրկէ ծառայութեան: Երկուքուկէս ամիս ետք ան Ամասիա կը փոխադրուի, որովհետեւ ինչպէս ինք կ'ըսէ՝ «Ռուս-թրքական պատերազմը երբ սկսաւ, ռուսերը թրքական սահմանը անցան, ու մինչեւ Դեկտեմբերի ուրբ [1914] հասան Բասէնի, Պալքաղտի եւ Ալաշկերտի հովիտը. լաւ դաս մը տուին թուրքերուն, ջարդ ու փշուր ըրին թէ՛ սահմանապահ ուժերը եւ թէ՛ Համիտիէի քիւրտ ալայները, ու ապա ետ քաշուեցան» (էջ 18):

Օսաննեան բանակի սպայ Գալուստ Սիրմէնեան Դ. բանակի զօրաբաժինին հետ Թորքում եւ ապա Օլթի կ'երթայ, ուր անոնք ռուսական բանակին հետ բախում կ'ունենան: Ան կը վիրաւորուի եւ Օլթիի զինուորական հիւանդանոցը կը տարուի: Դակատի վրայ թուրքերը նոր ուժերով կը փորձէին գրաւել այն շրջանները, ուրկէ ռուսերը կը նահանջէին: Ռուսական յարձակման ատեն սաստիկ ցուրտէն, յոգնածութենէն ու սնունդի պակասէն թրքական բանակը Սարքգամիշի լեռներուն առջեւ մեծ պարտութիւն կրած էր 19 Յունուար 1915-ին եւ խայտառակ կերպով սկսած էր նահանջել: Ատոր մասին հեղինակը կ'ըսէ. «Թրքական բանակին քառորդը չէր մնացած, սպաննուածին, գերի տարուածին հաշիւը չկար: Ողջ դարձողներէն շատերն ալ ցուրտին իրենց ձեռքերը կամ ոտքերը կորսնցուցած էին... Էնվեր հայ զինուորի մը անձնագրութեան շնորհիւ մահէն մազապուրծ ազատեցաւ եւ իր երազները հովին տուած՝ շունը Կ. Պոլիս առաւ» (էջ 21):

Դ. բանակի հրամանատարութիւնը Գալուստ Սիրմէնեանը Կարին կը դրկէ: Ան ճամբան ժանտատենդէ կը բռնուի: «Մաստիկ ցուրտը, սնունդի պակասը, կեղտոտութիւնն ու աննպաստ պայմանները՝ բանակին մէջ յառաջ բերած էին ժանտատենդի (փիֆիւ) վարակիչ հիւանդութիւնը: Գիւղ, քաղաք, Կարինէն մինչեւ Մեքաստիա, երկրին ամէն կողմը բռնած էր այդ մահաբեր հիւանդութիւնը, որ բաւական երկար տեւեց: Թէ՛ բանակէն եւ թէ՛ ժողովուրդէն տասնեակ հազարաւոր կէտներ իյլեց: Բանակի հրամանատարն անգամ գոհ գնաց ոչիլի այդ հիւանդութեան» (էջ 21-22), կ'ըսէ հեղինակը, որ երկու ամսուան համար արձակուրդ կ'առնէ եւ տուն, Երզնկա կը մեկնի:

Դակատին հրամանատար Էնվեր փաշա իր պարտութեան վրէժը կ'ուզէ հայերէն առնել: Ան Կ. Պոլսէն հրաման կ'արձակէ բոլոր ճակատներու հայ սպաներն ու զինուորները տեղ տեղ խուճրելով իաւաբէլ եւ ճանապարհաշինու-

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵԱՆ

թեան կամ թիկունքային աշխատանքներու վրայ դնել՝ շուտով զանոնք բնաջրնջելու նպատակով: Սիրմէնեան կ'ըսէ. «Բայց հայ սպաներէն ու զինուորներէն շատերը բանակին մէջ իսկ, կամ տեղ չհասած՝ սպաննուեցան» (էջ 23)

Կրկին Կ. Պոլսէն հրաման կը տրուի հայ զինուորներն ու սպաները հաւաքել Եղ թրպուրի (Ճամբու գումարտակ- Յ. Ի.) անուան տակ եւ գաղտնի տեղերու մէջ փնջանել զանոնք: Երզնկայի գաւառին մէջ այդ նպատակին համար որոշուած էր բոլոր այրերը հաւաքել Սանսայի ձորը [Սանսա - Գիւղ Արեւմտեան Հայաստանում, Երզրումի նահանգի Երզնկա գաւառում, Երզնկա քաղաքից մօտ 50 քմ. հարաւ արեւելք, Արեւմտ. Եփրատի աջափնեայ շրջանում, Սանսարա կիրճի մօտ: 20րդ դ. սկիզբին ունէր 35 տուն բնակիչ: Լինչի քարտէզում՝ Սուսա- Հայաստանի եւ Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան (Թաղեւոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախշեան, Յովհաննէս Բարսեղեան, «Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան», Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1998, էջ 3574 / 4814) համացանցային կայք- Յ. Ի.]: Հեղինակը Սանսայի ձորի աշխարհագրութեան մասին յանդէպ տեղեկութիւններ կու տայ ըսելով. «Սանսայի ձորը կը գտնուի Երզնկայի ու Դերջանի միջեւ Դիպիճի լեռան հարաւակողմը: Սարքալայի ու Տերսիմի լեռներուն միջեւ, ուր Եփրատը Երզնկայի դաշտը մտնելու համար նեղ անցք մը գտած է, 8-10 քմ. երկարութեամբ» (էջ 23):

Աւելի ուշ, ռուսական յեղափոխութեան պատճառով ռուսական բանակի նահանջէն ետք, «թուրքերը իրարու ետեւէ գրաւելով Երզնկան, Կարինը՝ հասան մինչեւ նախկին ռուս-թրքական սահմանը: Ապա անցնելով սահմանը, 23 Մարտ 1918-ին գրաւեցին Սարքգամիշը, Ապրիլ 16-ին՝ Կարսը եւ Մայիս 15-ին Ալեքսանդրապոլը, ու սկսան քալել Երեւանի վրայ: Մայիս 25-28 տեղի ունեցան Սարգարապատի եւ Կարաքիլիսէի ճակատամարտերը, որոնք վերջացան թուրքերու պարտութեամբ (էջ 39):

Թրքական զինուորական իշխանութիւնը Գալուստ Սիրմէնեանը Ձիլէն Պաթում կը տեղափոխէ 1918-ի Սեպտեմբերին: Անոր եւ հայ սպաներուն չարտօնուի իրենց ընտանիքները միասին տանիլ: Պաթումի մէջ մարզական գումղերու հրամանատար Եղալէտին էֆենտի, որ սուլթան Ազիզի թոնն էր, Սիրմէնեանի դասընկերը եղած էր Հարպիէ մէջ, Կ. Պոլիս: Գալուստ անոր միջնորդութեամբ իր եւ միւս հայ սպաներուն ընտանիքները Պաթում բերել կու տայ:

1918-ի Հոկտեմբեր 30ին կը կնքուի Մուտրոսի Ձինադադարը: Թրքական բանակի բոլոր պահեստի սպաներն ու զինուորները ազատ կ'արձակուին: Կը մնան Գալուստ Սիրմէնեան եւ ընկերը՝ Վահան Փաստրմաճեան որպէս մնալուն գործօն սպաներ: Ըստ զինադադարի պայմաններուն անգլիացիները Պաթում կը մտնեն եւ թուրքերը կը քաշուին հոնկէ: Գալուստ եւ Վահան քաշուելու ատեն կը պահուրտին գաղտնի վայր մը եւ Պաթում կը մնան: Անոնք կ'անցնին Երեւան ու երկուքուկէս տարի կը ծառայեն Հայաստանի Հանրապետութեան բանակին մէջ:

Գալուստ Սիրմէնեան Երեւան կը փոխադրէ իր ընտանիքը 1919-ի գարնան, երբ յարաբերական խաղաղութիւն կը տիրէր շրջանին մէջ: Ան կացութեան եւ հայ ազգի մասին իր խորհրդածութիւնները հետեւեալ ձեւով կ'արտայայտէ. «Կը մտածէիք, ո՞ր էիք երկու տարի առաջ, ո՞ր ենք հիմա: Երկու տարի առաջ, թրքական զենեկին մէջ, անյոյս, անապաւէն, այսօր մեր մայր հայրենիքին մէջ, հայկական բանակ, հայ նախարար, ամէն կողմ հայ: Կատարուած փոփոխութիւնը մեր մտքին մէջ չէր սեղմուէր, երազ ըլլար կարծէք» (էջ 45):

Գալուստ Սիրմէնեան Հայաստանի Հանրապետութեան Ա. Տարեդարձի հանդիսութեանց ներկայ կը գտնուի: Իր հետ Պաթումէն Երեւան եկած Վահան Փաստրմաճեան առաջին գումարտակը կազմած՝ Սուրմալու [Սուրմալու - գաւառ Երեւանի նահանգում- (Թաղեւոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախշեան, Յովհաննէս Բարսեղեան, «Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան», Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1998, էջ 3803 / 4814) համացանցային կայք- Յ. Ի.] կը մեկնի: Իսկ Գալուստ քանի մը օր յետոյ կազմելով երկրորդ գումարտակը կը հետեւի Վահանի: Երկու գումարտակները մաս կը կազմեն Ջօր. Սեպուհի հրամանատարութեան տակ գտնուող 8րդ գունդին::

Ջօր. Սեպուհ 7րդ եւ 8րդ գունդերը իրար կը միացնէ եւ կը կազմէ հայկական բանակին Դ. զօրաբաժինը, որ մեծաւ մասամբ վասպուրականցիներէ բաղկացած էր: Դ. զօրաբաժինի հրամանատարութիւնը կը յանձնուի Կ. Պոլսոյ Հարպիէն աւարտած սպայ Տիգրան Պաղտասարեանին: Հայկական բանակին մէջ բազմաթիւ արեւմտահայ սպաներ եւ զինուորներ կը գտնուէին: Գալուստ իր գունդը կը կազմակերպէ Բզտիքի մէջ [Բզտիք- Շրջան, գաւառ, երբեմն ոչ պաշտօնական ձեւով անուանում է Երեւանի նահանգի Սուրմալուի գաւառը- (վերոյիշեալ բառարանի կայք էջ 1547 / 4814) - Յ. Ի.]:

Յուշագիրքին 97-115րդ էջերուն մէջ Գալուստ Սիրմէնեան կ'անդրադառնայ հայկական բանակի կազմաւորման, Խորհրդային Հայաստանի հիմնադրութեան եւ հայ սպաներու աքսորին: Ան ցաւով կ'արտայայտուի Հայաստանի Հանրապետութեան կորուստի մասին, սակայն իբրեւ գիտակից հայ կ'ըսէ. «Մայիս 28էն ծնունդ առած սեփական հայրենիքը, յանձնիս Խորհրդային Հայաստանի... կը ծլի ու կը ծաղկի: Հոն ծնած ու մեծցած հայ նոր սերունդ մը կը հասնի եւ հայ ժողովուրդը կ'աճի ու կը յառաջդիմէ, իւրայատուկ խոյանքով» (էջ 119):

Գալուստ Սիրմէնեանի յուշագրութիւնը կ'ընդգրկէ հայութեան համար իւրայատուկ ժամանակաշրջանի մը դէպքերը եւ զարգացումները, որոնք այդ բոլորը ապրած հայու մը գրիչով կ'արձանագրուին, պատմութեան փաստացի տուեալներ հաղորդելով, որ այս գիրքին արժէքն է:

ՈՒՍՏԱԳԱՆՁՈՒԹԻՒՆ ՂԷՊԻ ԷՐԳԻՐ

Օր երկրորդ: ԷՐԶՐՈՒՄ-ՏԻԱՐՊԵՔԻՐ

Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից Էրզրում կամ Կարին քաղաքը (ունեցել է շուրջ 50 անուն) հիմնադրել է հայոց թագաւոր Կարանին, մ.թ.ա. 2-րդ հազարամեակում, գտնուում է Բարձր Հայքում Եփրատի ձախ կողմում, Այծպտկունք լեռան հիւսիսարեւմտեան լանջերին, ծովի մակերևույթից շուրջ 2000մ. բարձրութեան վրայ: Հարաւում Հաւաստամք լեռան բլրաշարերն են, արեւելքում՝ Դաւաթոյնի լեռնաշղթան, հիւսիսում եւ արեւմուտքում տարածուում է Կարնօ դաշտը: Վայեցիկը գոլ ու առողջարար կլիման եւ սառնորակ խմելու ջուր, որով այնքան առատ քաղաքը: Չմեռն այստեղ երկարատեւ ու խստաշունչ է, ամառը՝ գոլ, կարճատեւ: Երուանդունի, արտաշեսեան եւ արշակունի թագաւորական հարստութիւնների ժամանակ (մ.թ.ա 6-5-րդ դարեր), Կարնոյ գաւառի կենտրոնն էր: Նշանակութիւնը սկսել է մեծանալ 387 թ. Հայաստանի առաջին բաժանումից յետոյ, որպէս բիւզանդական մասի սահմանային կարեւորագոյն բերդաքաղաք: Ազդեցիկ էին Բիւզանդիայի թէոդոս II կայսեր (408-450) յանձնարարութեամբ, Անատոլ գօրավարի 431 թ. կառուցած ամրութիւնները, որոնք վերակառուցուել են Անաստաս I-ի (491-518) եւ Յուստինիանոս I-ի (527-565) ժամանակ: 885 թ Կարինը Բագրատունիների թագաւորութեան կազմի մէջ էր: 949 թ. բիւզանդացիները այն նորից խլել են հայերից: 1049 թ., երբ սելջուկ-թուրքերը կործանեցին Արծն քաղաքը, նրա բնակիչները եկան ու հաստատուեցին Կարինում եւ այն իրենց հայրենի քաղաքի անունով կոչեցին Արծն, որից եւ առաջացել են Կարինի բուրբ-արաբական Արզն Ռում (բիւզանդացիների Արծն), Արզրում, Էրզրում անունները: 1242 թ. քաղաքն անցել է մոնղոլ-թաթարների իշխանութեան տակ: 15-րդ դարում Կարինին յաջորդաբար տիրել են կարակոյունլու եւ աղկոյունլու վաչկատուն ցեղերը, իսկ 1514 թ. գրաւել է օսմանեան սուլթան սելիմ I-ը:



1829 թ. աղրիանապոլսի հաշտութեան պայմանագրով, Կարինը վերադարձուեց թուրքերին: Ռուսական զօրքերի հետ քաղաքից 20 հազար հայեր հեռացան եւ բնակութիւն հաստատեցին ախալցխայի, ախալքալաքի, Լոռու, Փամբակի շրջաններում: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ էլ այնտեղից Այրկովկաս գաղթեց 2000 ընտանիք: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կարինի հայ բնակչութեան զգալի մասը զոհ է գնացել թուրքական եաթաղանին: 1918 թ. փետրուարի 26-ին ռազմաստրատեգիական նշանակութիւն ունեցող քաղաքը նորից անցել է թուրքերի ձեռքը: Ազդեցիկ էր նաեւ Միջնաբերդը, որը շրջապատուած է կրկնակի շրջապարիսպներով, որոնց վերահսկել են 72 աշտարակները եւ չորս՝ Ախալցխայի, Երզնկայի, Թարիզի եւ Խարբերդի գլխաւոր դարպասները:

Յաւօք, օտարների երկարատեւ տիրապետութիւնը փոխել է Կարինի բնակչութեան պատկերն ի վնաս հայերի: 1829 թ. Կարինն ուներ շուրջ 130 հազար բնակիչ, որից հայեր 30 հազար, 1909-ին՝ 60 հազար, որից հայեր՝ 15 հազար: Հայերը բնակուում էին քաղաքի հիւսիսային ու հիւսիսարեւմտեան թաղամասերում: Այստեղ էին գտնուում նաեւ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, ու Ռուսաստանի հիւպատոսութիւնները: Քաղաքի մօտակայքում արդիւնահանում է կերակրի աղ: Կարինը ջրառատ քաղաք է, այնտեղ բխում են շուրջ 500 յորդառատ ու սառնորակ աղբիւրներ: Ջրի մի մասն էլ Այծպտկունք լեռան լանջերից քաղաք էր բերում խողովակաշարով:

Դիտարժան են Բարձր Հայքի 1840 թ. կառուցուած Ս. Աստուածածին եկեղեցին, որտեղ մինչեւ 1915 թ. պահուում էին 13-18-րդ դարերում տասնեակ հայերէն ձեռագրեր: Հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ մուսուլմանական Չինլի եւ Յախճապակեայ մինարէները, Ուլու ճամի մզկիթը, որոնք, ի դէպ, կամ վերափոխուած քրիստոնէական շէնքեր են, կամ կառուցուած են

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆէսոր

աւերուած ու քանդուած հայկական եկեղեցիների տեղում եւ դա այսօր էլ զգացում է: Երիտթուրքերը կարինում հայերի զանգուածային ջարդն իրականացան 1915 թ յունիսի 14-15-ին եւ յուլիսի 26-ին: Այժմ քաղաքում յատուկեմտ հայեր են բնակուում:

Վաղ առաւօտեան ուղեւորուեցիկը Տիարպեքիր: Գարնանային թարմ կանաչն ու հաճելի գոյները հաճելի զգացողութիւն էին առաջացնում: Սակայն ճանապարհը, որը ձգուում էր Պինկէօլի լեռներով ու բնութեան շռայլ պատկերներով, միայն հակասական տրամադրութիւններ էին առաջացնում: Ինձանից անկախ յիշեցի «Քոյրիկ ասա որն է ճամբան Պինկէօլի» ու ինքս ինձ բռնացրի այն մտքի վրայ, որ այլեւս ճամփայ չկայ, այլ ուղիղ, գերհարթ ու ասֆալտապատ մայրուղիներ են, որոնք ուղղակի մարդու նախանձ են շարժում: Խոտովանեմ, որ թէեւ ճանապարհը բաւականին երկար էր, բայց ցաւերս տանելի էին, որովհետեւ մտորումներս ուղղակի ժամանակ չէին թողնում ցաւերի համար: Ի վերջոյ, մեր առջեւ փռուեց քաղաքակիրթ նորմերով կառուցուած ժամանակակից Տիարպեքիրը:

Տիարպեքիր կամ ամիղ քաղաքը մեծ Հայքի աղճնիք նահանգում է՝ Արեւմրտեան Տիգրիսի աջ ափին՝ հայկական Տարոսի հարաւային ճիւղից (Կարաջաղաղ) իջած հրահոսանքի ծայրին: Անուանումը արաբերէն է եւ կազմըւած է դիար (բնակուելու տեղ) եւ բաքր (ցեղանուն) անուանումների միացումից: Օսմանները երկար ժամանակ չի կարողացել նուաճել եւ տարածքին տուել են «Տիար Պեքիր» «կոյսի երկիր» անուանումը: 298 թ. Տիարպեքիրը գաւթել է հռոմէական կայսրութիւնը: Չգալի պահպանուել են 332 թ. կոստանդինոս Մեծ կայսրի վերակառուցած ամրութիւնները: 4-17-րդ դարերում քաղաքին տիրել են պարսիկները, բիւզանդացիները, արաբները, քրտերը, սելջուկեան թուրքերը, թաթար-մոնղոլները, թուրքմէները:

1895 թ. համիդեան ջարդերի ժամանակ ոչնչացուել է 3 հազար հայ: Կորոպտուել եւ հրկիզուել է մօտ 2 հազար տուն, 2,5 հազար խանութ եւ կրպակ: 5 հազար հայեր էլ բնաջնջուել են 1915 թ. մեծ եղեռնի ժամանակ: Շուրջ մէկ միլիոն բնակչութիւն ունեցող քաղաքում կայ սննդի եւ տեքստիլ արդիւնաբերութեան, ատոհաւաքման եւ այլ գործարաններ: Երկաթուղային կայան է, խճուղային ճանապարհների հանգոյց: Ներկայումս հիմնականում Սուրբ Կիրակոս եկեղեցու շրջակայքում բնակուում է 20 հայկական ընտանիք:

Դիտեցիկը շատ ազդեցիկ ամրութիւնները, որոնք կառուցուել են անշահապա ագուցումով վիթխարի բարերից: Ցքմ. երկարութիւն, 10մ. բարձրութիւն եւ 5մ. լայնութիւն ունեցող, հիմնականում կանգուն պարիսպ մի կողմից հարում է հնագոյն բերդին (այժմ՝ ատերակ), միւս կողմից՝ Տիգրիսի տասնակամար կամրջին: Պարիսպն ունեցել է 72 բարձրաբերձ ու կիսաբոլոր աշտարակ, 4 մետաղակուռ դարպաս: 72 աշտարակները խորհրդանշել են Քրիստոսի 72 աշակերտներին, իսկ 12 առաւել հաստապատ աշտարակները՝ առաքեալներին:

Տպաւորիչ էր յատկապէս բարձրադիր ժայռին կառուցուած միջնաբերդը, որը շրջափակուած է քառադարպաս, աշտարակաւոր պարսպով: Չորս դարպասների անունները եղել են՝ հիւսիսայինը՝ հայոց դուռ (արաբերէն Բարպալ-արմանի), իսկ հետագայում՝ Լեւոնի, կամ Կարնօ, արեւմտեանը՝ հռոմեաց (բիւզանդացիների), հարաւայինը՝ Մերտինի եւ արեւելեանը՝ նոր կամ շաք (զետի) դուռ:

Չգալիօրէն պահպանուել են միջնաբերդի ապարանքներից նշանաւոր Ոսկեգուն եւ Արքունի պալատները, Ուլու Չամին: 629 թ. կառուցուած Ս. Աստուածածին եւ այլ միջնադարեան բազմաթիւ եկեղեցիներ (Ս. Կաթողիկէ, Ս. Գէորգ, Ս. Երրորդութիւն, Ս. Յովհաննէս) 16-17-րդ դարերում վերածուել են մզկիթների: Քաղաքի մօտ 10 հազար հայեր ունէին գործող երկու առաքելական եկեղեցի (Ս. Սարգսի հնգախորան) եւ (Ս. Յովսէփ կաթողիկէ եկեղեցին: Լաւ է պահպանուել, իսկ որոշ մասերում էլ նորոգուել է Ս. Կիրակոսի եօթնախորան եկեղեցին: Պատկերացում կազմելու համար եկեղեցու մեծութեան մասին, ասեմ, որ միաժամանակ այնտեղ պատարագի կարող են մասնակցել 1500 հաւատացեալ: Իսկապէս, մեծութիւնն ու լաւ պահպանումը շքեղութիւնը պատկառանք են ներշնչում: Շատ յուզիչ էր, երբ խմբով կանգնած Հայր մեր էինք երգում, մօտեցաւ պարէտ-պահակը, բացեց դէպի խորան տանող ժապաւէնը եւ հրախիթեց ուղիղ խորանի մօտ կատարել մեր կարգը: Երբ ուրիշ այցելուներ էլ փորձեցին անցնել այդ արգելքը, նա չթողեց եւ շէշտեց՝ նրանք հայեր են...

Խմբում չկար մէկը, որ անտարբեր մնար, յուզուած էինք բոլորս: Չէ, բոլորը չէ, որ հաւատացեալներ էինք, կային նաեւ աթէխտներ, բայց արեան կանչն էր, թէ մէկ այլ բան, բոլորի աչքերը խոնաւացել էին...այդպէս էլ խոնաւաչք անցանք շատ լաւ պահպանուած Սանասարեան վարժարանի շէնքի կողքով (քաղաքում գործել են նաեւ Անձնուէր, Հայրենասիրաց, Մեսրոպեան, Պատանեաց եւ Համազգային ընկերութիւններին պատկանող կրթարաններ), ակամայ յիշեցի նրանց պատերից դուրս եկած Հայաստանի առաջի հանրապետութեան ԱՄՆ-ում առաջին դեսպան կարնեցի Արմէն Գարոյին, «Պաշտպան Հայրենեացի» առաջնորդ Խաչատուր Կերեքցեանին եւ այլ նուիրեալների: Տխրեցի, բայց նաեւ հպարտացայ, ինձ առաւել ուժեղ զգացի, որ նրանց արեան հոսքն այսօր էլ շարունակուում է, հետեւաբար նրանց գործն էլ կիսատ չի մնայ...

(Շարունակելի)

ՊԵՆՏԻ-ՔԱՅԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ.

ՀԱԲԱՏՔԻ, ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՀՈԳԵԻՈՐ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՕՐՀՆԵԱ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

Յունիս 5-էն 7, Պենտի-քայի Հայ Եկեղեցւոյ համայնքը ապրեցաւ օրինեալ եւ յիշարժան օրեր, երբ Zedelgem-ի մէջ, կազմակերպուեցաւ հայկական ճամբարը: Այս շնորհառատ եւ հոգեպարար ձեռնարկը մէկտեղեց մօտ 120 մանուկներ ու պատանիներ, ինչպէս նաեւ 43 հոգեւորականներ, վարիչներ, ուսուցիչներ եւ խոհանոցային ծառայութեան կամուարներ, որոնք երեք օր շարունակ համախմբուեցան աղօթքի, զիտութեան, բարեկամութեան, խաղերու եւ հոգեւոր ուրախութեան մթնոլորտին մէջ:



Ճամբարը տեղի ունեցաւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատիւրակ Գերաշնորհի Ս. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի օրհնութեամբ եւ հովանաւորութեամբ, ինչպէս նաեւ Պենտի-քայի Հայ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ՝ Հոգեշնորհ Տէր Զատիկ Վրդ. Աւետիքեան, Հոգեշնորհ Տիրայր Վրդ. Յակոբեան եւ Հոգեշնորհ Մաղաքիա Արդ. Պէքսիզեանի առաջնորդութեամբ ու հոգատար մասնակցութեամբ:

Այս օրերու ընթացքին, մանուկներն ու երիտասարդները բացառիկ առիթ ունեցան աւելի խորապէս մօտենալու քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւններուն, վերագտնելու հայ գրականութեան անսպառ հարստութիւնը, եւ երգերու, պարերու, կրթական ու ժամանցային բազմազան ծրագիրներու ընդմէջէն զգալու եւ ապրելու հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգութեան ողջ գեղեցկութիւնն ու կենսատու շունչը: Հոգեւորականներու, ուսուցիչներու եւ վարիչներու սիրագործով խնամքին ներքեւ, ճամբարը վերածուեցաւ այնպիսի սրբազան ու ջերմ միջավայրի մը, ուր հաւատքը սնանեցաւ, ընկերական կապերը ամրապնդուեցան, եւ անջնջելի յիշատակներ դրոշմուեցան մանկական ու երիտասարդ հոգիներուն մէջ:



Բնութեան անդորրին եւ վայելչութեան մէջ կայացած այս համախմբումը նաեւ հանդիսացաւ եկեղեցական միութեան կենդանի ու ներշնչող վկայութիւնը: Տարբեր ծովխերէ ժամանած մասնակիցները մէկ սրտով եւ մէկ հոգիով միացան իրարու, հաստատելով եղբայրակցութեան եւ հաղորդութեան այն կապերը, որոնք կը գործացնեն Պենտի-քայի Հայ Եկեղեցւոյ համայնական կեանքը եւ կը վկայեն անոր կենսունակ ներկայութեան մասին:

Ճամբարի աւարտը պսակուեցաւ Կիրակի առաւօտեան մատուցուած Սուրբ Պատարագով, զոր հանդիսապետեց Գերաշնորհ Ս. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան: Բաց երկինքի տակ, Աստուծոյ արարչագործութեան վսեմ գեղեցկութեան մէջ մատուցուած այս Սուրբ Պատարագը առաւ առանձնայատուկ խորութիւն եւ քաղցրութիւն՝ բնութեան մեղմ ձայներուն եւ Հայ Եկեղեցւոյ սքանչելի շարականներուն միախառնումով, ստեղծելով խոր աղօթքի, սրբազան լռութեան եւ գոհարանական բարձրացումի մթնոլորտ մը:

Մանուկներն ու երիտասարդները խոնարհ եւ աղօթասեր հոգիով մասնակցեցան Սուրբ Պատարագին եւ հաղորդեցան Սուրբ Հաղորդութեամբ, որ Եկեղեցւոյ կեանքին մէջ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հետ միութեան, ինչպէս նաեւ փոխադարձ եղբայրակցութեան գերագոյն եւ սրբազան նշանն է: Իր հայրական ու սիրով լեցուն պատգամին մէջ, Գերաշնորհ Սրբազանը յիշեցուց երիտասարդներուն մեր Տիրոջ առանձնայատուկ սէրը մանուկներուն հանդէպ՝ վերջիշեղով Աւետարանին այն քաղցր ու յափտենական խօսքը. «Թո՛ղ տուէք մանուկներուն, որպէսզի գան Ինձի»: Ան հաստատեց, թէ Քրիստոսի սիրտը կ'ուրախանայ, երբ կը տեսնէ զանոնք համախմբուած հաւատքի, սիրոյ եւ միաբանութեան մէջ:

Այս օրինեալ ճամբարը գեղեցիկ եւ մխիթարիչ վկայութիւնն է Պենտի-քայի Հայ Եկեղեցւոյ համայնքին կենդանի հաւատքին, հոգեւոր արթնութեան եւ ազգային-եկեղեցական ինքնագիտակցութեան: Ան իր երիտասարդ մասնակիցներուն պարգեւեց ոչ միայն ուրախութեան, խաղի եւ ընկերակցութեան

անմոռանալի պահեր, այլ նաեւ աւելի խոր զգացում մը՝ իրենց հոգեւոր պատկանելիութեան, ազգային ժառանգութեան եւ եկեղեցական միութեան նկատ-



մամբ: Աստուծոյ առատ շնորհքով, այս սերմնացանը վստահաբար պիտի շարունակէ բարի պտուղներ տալ անոնց կեանքին մէջ՝ իրրեւ հաւատքի, սիրոյ եւ ծառայութեան օրհնեալ յիշատակ:



ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ Է ՀԵՂԻՆԱԿ ԽՈՐԵՆ ԱՐԱՄՈՒՆԻ ՆՈՐ ՎԵՊԸ

Կլենտէյլ, Քալիֆորնիա – Ապրիլ Գրատունը ներկայացնելու է հանդիպում եւ գրոյց հեղինակ **խորեն Արամունի** հետ, իր նոր հրատարակուած՝ «**Կարմիր բերետով օտարականը**» վէպի առիթով՝ **Հինգշաբթի, 20 Յունիս, 2026**, երեկոյեան ժամը **7:00ին**, **Center for Armenian Arts** հաստատութեան մէջ՝ 250 N. Orange St., Glendale, CA: Մասնակցելու եւ լեզուաբան՝ Լիլիթ Խաչատրեանը ու դերասան՝ Աշոտ Աղամեանը: Մուտքը ազատ է:

«**Կարմիր բերետով օտարականը**» իր բնոյթով սիրավէպ է: Սակայն սիւժետային զարգացումները տեղի են ունենում պատմական ու քաղաքական կարեւոր իրադարձութիւնների հենքի վրայ, ինչը հնարաւորութիւն է տալիս, մի կողմից՝ յետահայեաց արժեւորել ու ընդհանրացնել նախորդ տասնամեակների հայաստանեան կեանքի խորապատկերը, միւս կողմից՝ բարձրաձայնել հոգեբանական անչափ կարեւոր խնդիրներ, որոնցից շատերը, տարբեր հանգամանքների բերումով, դեռ շարունակում են մնալ արդիական:

Հանդիպում և գրոյց հեղինակի հետ՝

ԽՈՐԵՆ ԱՐԱՄՈՒՆԻ

մասնակցողներ՝

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԱՇՈՏ ԱՂԱՄԵԱՆ

Խորեն Արամունի (Քելիշեանը) արձակագիր, դրամատուրգ եւ քարզմանիչ է: Ծնունդ է 1948թ. Իրանում: Երկու տարի սովորել է Սպահանի համալսարանի հայագիտական բաժնում: 1969 թուականին հայրենադարձուել է: 1975 թուականին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1980 թ. արտագաղթել է ԱՄՆ: Տպագրուել է ԱՄՆ-ի հայալեզու թերթերում եւ ամսագրերում: Համագործակցել է «Հայաստան» հեռուստահաղորդումներին: Հիմնադրել է «ԱՅԲ-ԲԵՆ» հրատարակչութիւնը: 1994 թուի. եղել է «Գարուն» Ամսագրի ներկայացուցիչը ԱՄՆ-ում: 1992 թ. առաջին անգամ Հայաստանում լոյս է տեսել նրա «Յետմահու հարսանիք» պատմուածքների ժողովածուն: 2004 թուականից Հայաստանի Գրողների Միութեան անդամ է: 2014 թ. Պարգևատրուել է ՀՀ սփիւռքի նախարարութեան «Ուիլիամ Սարոյեան» մետալով: 2018 թ. Իր գրական վաստակի համար արժանացել է ՀԳՄ-ի մետալին: Արժանացել է Գալիֆորնիայի սենատի, Լոս Անճելըսի գաւառի եւ տարբեր քաղաքների աւելի քան տասնչորս պատուգրերի: Հրատարակել 18 անոն գիրք, նրա աւելի քան եօթ պիեսները բեմադրուել են թէ՛ Հայաստանում, թէ՛ նրա ասիաներից դուրս: ԱՄՆ-ի եւ Հայաստանի քաղաքացի է:

ՀԱՅԿԱԳԵԱՆ ՀԱՄԱԼԱՐԱՆԻ 66-ՐԴ ՀՈՒՆՉՔԻ ԱՄՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ

Հայկագեան Համալսարանը Ուրբաթ, 5 Յունիս 2026-ին, հանդիսատիս մթնոլորտի մէջ նշեց իր 66-րդ Շրջանաւարտական Հանդիսութիւնը: Ներկայութեամբ Հայաստանի Դեսպան Տիար Սարմէն Պաղտասարեանի, հոգեւոր պետերու, ընտանիքի անդամներու, բարեկամներու եւ համալսարանի հիւրերու, 172 շրջանաւարտներ ստացան իրենց վկայականները, պսակաւոր արուեստից եւ գիտութեանց ինչպէս նաեւ մագիստրոսի աստիճաններով:



Բացման խօսքին մէջ համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսեան խոր հպարտութեամբ արտայայտուեցաւ շրջանաւարտ դասարանի յաջողութիւններուն: Ան յատուկ կերպով գնահատեց ծնողներուն եւ ընտանիքներուն անսակարկ նուիրումը, զոհողութիւններն ու քաջալերանքը, ներկաները հրաւիրելով ջերմ ու խանդավառ ծափոջոյնով երախտագիտութիւն յայտնելու անոնց:

Հայտոսեան անդրադարձաւ բարձրագոյն կրթութեան կարեւորութեան եւ անոր հետ կապուած մարտահրաւերներուն: «71 տարիներ շարունակ, Հայկագեան մեր բոյնը շարունակած է բարձրացնել հայուն ամուրը, պատրաստել սերունդներ մասնագիտական ծառայութեան, կամուրջներ հաստատել Միջին Արեւելեան զանգուածներու հետ, եւ անկայունութեան, անարդարութեան թէ պատերազմներու մթնոլորտներուն մէջ իսկ, յաջողած է ներշնչել շատերը խոր մարդկային եւ քրիստոնէական խաղաղարար սկզբունքներով, այս բոլորը՝ հիմնուած դարաւոր հոգեմտաւոր, մշակութային ու ազգային ժառանգութեան վրայ» Հայտոսեան ըսաւ:



Անդրադարձաւ Հայկագեանի սուրբ արաքելութեան, Հայտոսեան նշեց, «Մեր ուսումնական ու մշակութային ծրագիրներով եւ ստեղծած մթնոլորտով պիտի շարունակենք պատուել Լիբանանը, Հայաստան Հայրենիքը, ծաղկեցրնել հայու արժանապատիւ պատմութիւնն ու վկայութիւնը, նուիրաբերելով մեր լաւագոյնը, բարոյական ու քրիստոնէական հոգեմտաւոր արժանիքով»:



Հանդիսութեան ընթացքին խօսք առաւ նաեւ համալսարանի նախկին շրջանաւարտուի Ճիման Խայուա Ալ Քասեմը՝ վկայագրուած կրթական հոգեբան եւ Մաքսսէտ Խայետ Պըն Էլ Ուալիտ Քոլեճի տնօրէնը: Անդրադառնալով Հայկագեան Համալսարանին հետ իր ութամեայ ուղեւորութեան՝ որպէս ուսանողուի եւ ապա շրջանաւարտուի, ան համալսարանը բնորոշեց որպէս «աւելին, քան ուսումնական դարձաւ տուն մը, որ սնած է իմ ձգտումներս, ամրապնդած է բնաւորութիւնս եւ ներշնչած է գերազանցութեան, յարատեւութեան ու կեանքի տեւող ուսման արժէքները»:

Իր նախաւարտական եւ մագիստրոսական ուսման փորձառութիւններն մեկնելով՝ Ալ Քասեմ ընդգծեց Հայկագեանի կրթական միջավայրին, նուիրելով դասախօսներուն եւ մնալուն առաջնորդութեան վերափոխիչ ազդեցութիւնը: Ան շեշտեց, որ համալսարանը իր ուսանողները կը պատրաստէ «ոչ միայն յաջող մասնագիտական ասպարէզներու, այլեւ իմաստալից կեանքի», զինելով զանոնք այն գիտելիքներով, կարողութիւններով եւ արժէքներով, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ու անձնական մարտահրաւերներուն դիմագրաւման համար:

Դիմելով շրջանաւարտներուն՝ ան քաջալերեց զանոնք մարտահրաւերները դիմաւորելու լաւատեսութեամբ, ձգտելու գերազանցութեան իրենց բոլոր նախաձեռնութիւններուն մէջ եւ մնալու գիտակից ու պատասխանատու քաղաքացիներ:

Իսկ շրջանաւարտներուն անունով խօսք առին Արման Տէր Պետրոսեանն ու Պիսան Էլ Հասանը որ իրենց դասընկերներուն անունով անոնք խոր շնորհակալութիւն յայտնեցին ծնողներուն, դասախօսներուն, համալսարանի վարչական ու ակադեմական անձնակազմին՝ գնահատելով անոնց նուիրումը, առաջնորդութիւնն ու ներդրումը իրենց կերտման եւ կեանքի յաջող հանգրուանին պատրաստելու գործին մէջ:

Հանդիսութիւնը արարեցաւ համալսարանի քայլերգի երգեցողութեամբ, որմէ ետք օրհնութեան խօսքը փոխանցեց Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Յանձնախումբի ատենապետ Վեր. Հրայր Չոլաքեանը:

ՄԻՐԱ ԵԱՐՏԸՄԵԱՆ
Հանրային Կապերու Տնօրէն

ԼԻՊԱՐԻՏ ԱԻԵՏԻՍԵԱՆԸ ՄԵԹՐՈՓՈԼԹԸՆ ՕՓԵՐԱՅԻ ԲԵՄՈՒՄ

Այս օրերին Նիւ Եորքի աշխարհահռչակ Մեթրոփոլիթէն օփերայի բեմում մեծ յաջողութեամբ հանդէս է գալիս ՀՀ վաստակաւոր արտիստ, Երեւանի օփերային թատրոնի մենակատար, թեմոր Լիպարիտ Աւետիսեանը: Մէկ ամսից աւելի է, ինչ նա Վերտիի հանրայն «Թրախաթա» օփերայում կատարում է գլխաւոր հերոսի՝ Ալֆրետոյի դերը՝ Վիոլեթայի դերում զուգընկեր ունենալով իտալացի օփերային աստղ Ռոզա Ֆելոյային: Սա Լիպարիտ Աւետիսեանի առաջին բեմելն է Մեթրոփոլիթէն օփերայում:



Ինչպէս մեր հեռախօսագրոյցում նշեց ներկայացումներին ներկայ գտնուող կոմպոզիտոր Կոնստանտին Պետրոսեանը՝ «Լիպարիտի ելոյթները մեծ ոգեւորութեամբ են ընդունուած հանդիսատեսի կողմից, նրա կատարած իւրաքանչիւր արիա ընդունուած է բուն, յոտնկայս ծափահարութիւններով եւ հիացական բացազանչութիւններով: Սա երգչի համար մեծ յաջողութիւն է, իսկական յաղթանակ այս շատ պատասխանատու բեմում...»: Նշենք, որ մինչ մեթրոփոլիթէնեան ելոյթները, Լիպարիտ



Աւետիսեանը 2025-2026 թուականների ընթացքում մեծ յաջողութեամբ հանդէս է եկել ամերիկեան այլ բեմահարթակներում (Մանհեթենի Թագաւորական օփերային թատրոն, Փալմա Պիչի օփերային թատրոն), եւրոպական նշանաւոր օփերային թատրոններում, այդ թում՝ Լոնտոնի Քովենթ Կարտընում (Ալֆրետո), Յիւրիխի օփերային թատրոնում (Ռիկոլեթթո), ինչպէս նաեւ Պուլտոս Այրեսի Գոլոն թատրոնում՝ (Ալֆրետո), ի դէպ, այստեղ Վիոլեթայի դերը կատարում էր մեր միւս տաղանդաւոր հայրենակիցը՝ սոփրանօ Հրայրիկ Բասեմը...



Ծանօթանալով լայնածաւալ համերգների արձագանգներին, առանց վարանելու կարելի նշել, որ Լիպարիտ Աւետիսեանն այսօր համաշխարհային ճանաչում ունեցող ամենայայտնի օփերային երգիչներից մէկն է, որի ելոյթները մեծ իրադարձութիւն են համարուած ցանկացած երկրի օփերային բեմում: Արդէն իսկ յաջող տարի երգիչը հրաւիրուած է Շիքսպիրի օփերային թատրոն՝ հանդէս գալու մի քանի ներկայացումներում: Ուրախ ենք ու հպարտ եւ նոր յաջողութիւններ ենք մաղթում մեր սիրելի հայրենակցին...

ՄԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄԵԱՆ

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Պայքար»-ի խմբագրական կազմի անդամ եւ ներհուն մտաւորական Տէր եւ Տիկին Վաչէ եւ Սօսի Սեմերճեաններ (Կլէմէյ, Գալիֆորնիա), գնահատելով պաշտօնաթերթին անխաբան հրատարակութիւնը եւ պահելով ճոխ բովանդակութիւնը, 200 տոլար կը նուիրեն «Պայքար»-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՔԻՆ Շաբաթաթերթը

կարելի է կարդալ
www.baikarweekly.com
կայքէջով